## ԹԻՖԼԻՍԻ

## ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1908/9 Թ. ՄԻՆՉԵՒ 1911/12 ԹԻՒԸ.

ԹԻՖԼԻՍ
...ան Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ, Պուշկինեան փող. № 3.
1912.

373
Գ-26

ՍՏՈՒԳՎ Ծ Է
1952 թ.

ԹԱՏՐՈՆԻ ԳՐԱԿԱՆ ԻՆՍՏ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
...ратуры

5390

ՍՏՈՒԳՎ
1952 Թ.

ԹԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԻՆՍՏ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ратуры

5390

I.

## ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

*Հայ ժողովրդական կեանքի մէջ հազիւ են պատահում դէպքեր, որոնց ուսումնասիրութիւնը և՛ խրատական լինի և՛ օրինակելի։ Այդպիսի դէպքերի շարքին է պատկանում Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի սկզբնաւորութիւնը։ Ուստի ուսումնարանիս Վարչութիւնը, առաջ քան թէ կանցնէր իւր եռամեայ գործունէութեան հաշուետուութեանը, կարևոր է համարում համառօտակի յիշատակութիւն անել դպրոցիս բացման, սրա զարգացման, փակման և վերաբացման մասին։*

*1869 թ. սկզբներին Թիֆլիսում ապրող մի խումբ երիտասարդներ անյետաձգելի պահանջ են համարում հիմնել մի օրիորդաց ուսումնարան, որ իւր նպատակներով ու ծաւալով կարողանար սահմանել ու կատարել իգական սեռի կրթութեան ու դաստիարակութեան վերաբերութեամբ այն դերը, որը տասնեակ տարիներ առաջ հիմնուած Ներսիսեան Դպրանոցը կատարում էր հայ-տղաների վերաբերութեամբ։ Նպատակի վսեմութիւնը և կարիքի պահանջը այնքան բացորոշ է լինում, որ այս երիտասարդներին հաճութեամբ ձայնակցում են ժամանակի հոգևորականութեան մի քանի ընտիր ներկայացուցիչներ, առանց որոնց դպրոցական մի նոր գործ չէր կարող սկզբնաւորութիւն ստանալ մեզանում։*

*Նախնական խորհրդակցութեան րոպէներին, անկասկած, առաջին հրատապ խնդիրը, որ զբաղեցնում էր նախաձեռնող անձանց, պիտի լինէր դրամի խնդիրը. որտեղից վերցնել փող՝ նոր դպրոց բանալու համար, այն էլ միջնակարգ լինելու նախորոշ մտադրութեամբ։ Եւ ահա նախաձեռնողները, ըստ առածին՝ թէ ձեռ շուռ գայ, ձեռան կը կոտրէ, իրանց գործողութեան հիմք ընդունում են երկու բան՝ ա. աշխատել ձրի ծառայել դպրոցին. բ. պարտաւորացնել դասեր ընդունել և այն պարոններին (նոյնպէս ձրի), որոնք Ներսիսեան Դպրոցում պաշտօն ունեն և փող են ստանում։*

Այս երկու որոշմանը բացարձակ կերպով հպատակուելուց և սրանց որպէս ղեկավարող սկզբունք ընդունելուց յետոյ՝ նախաձեռնողները դիմում են ժամանակի Թեմակալ առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին և խնդրում են նրա հաճութիւնը։

Նախաձեռնողները լինում են՝ Նիկողայոս Ալաղաթեանց, Մարտիրոս Սիմոնեանց, Ստեփանոս Պալասանեանց, Զաքարիա Գրիգորեանց, Յովհաննէս Բաթմանեանց, Միքայէլ Սալամբէգեանց, Միքայէլ Գուլաղեանց, Գէորգ Եւանգուլեանց և Գրիգոր Տէր-Յարութիւնեանց։

Մայիսի 26-ին 1896 թ. Մակար եպիսկոպոսը տալիս է ուսումնարանի բացման հրամանը, որի մէջ հետևեալ էական սկզբունքներն է դնում.

ա) Այդ և նման դպրոցների միջոցով հայախօսութիւնն անել գերդաստանական լեզու, բ) Սուրբ գրքերի ընթերցմունքը հասկանալի կացուցանել սանուհիներին։

Ուրիշ խօսքով՝ աշխարհաբար լեզուի զարգացմանը տալ առաջնակարգ նշանակութիւն, բայց չ՚մոռանալ նաև այնչափ նախածանօթութիւն տալ գրաբար լեզուից, որ սանուհիները կարողանան հասկանալ գրաբար ընթերցուածների, աղօթքների և եկեղեցական արարողութիւնների իմաստը։

Սրբազան առաջնորդի թոյլտուութիւնն ստանալուց յետոյ, 1869 թ. յունիսի 17-ին, Սուրբ Գայիանեանց տօնին, բացւում է Թիֆլիսում Գայիանեան հայ-օրիորդաց ուսումնարանը մեծ հանդիսաւորութեամբ։ Առաջնորդն օրհնում է նախաձեռնութիւնը, գլխաւոր կառավարիչը (հայր Սուղանաճեանց) ճառ է արտասանում, տեսուչը (Զաքարիա Գրիգորեանց) բանախօսութիւն է անում և ներկայ եղողներից 36 հոգի բարերարներ են գրւում։

Բացման օրը ուսումնարանն ունենում է միայն հինգ աշակերտուհի։ Ուսման վճարը նշանակւում է ամսական 3 րուբլի, որ յետոյ դառնում է տարեկան 40 րուբլի։ Որոշւում է տասը վճարող աշակերտուհու դիմաց պահել մի ձրիավարժ չքաւոր մանուկ։

Թէ որպիսի գաղափարական ոգևորութիւն, եռանդ ու խանդավառութիւն էր տիրում այդ հինգ մանուկների շուրջը, երևում է այն երկար ցուցակից, որի մէջ թուած են դպրոցի խնամակալները, գլխաւոր կառավարիչը, գանձապահը, տնտեսն ու տասն եւ չորս ուսուցիչները։

Այնուհետև եթէ դուք թերթելու լինէք այս դպրոցի տասնամեակի պատմութիւնը պարունակող գրքոյկը, հաճութեամբ և զարմանքով կը նկատէք, որ ժամանակի համարեա բոլոր աչքի ընկնող գրական գործիչները պաշտօնավարել ու նպաստել են Գայիանեան դպրոցի զարգացմանը, յառաջադիմութեանը և այն բարձր դիրքին, որին սա հասել է իւր գոյութեան լաւագոյն օրերին։ Շնորհիւ այդ գրական գործիչների ձրի պաշտօնավարութեան՝ Գայիանեան դպրոցը, որ իւր բացման առաջին օրը ունէր միայն մի բաժանմունք՝ հինգ սանիկներով, իւր գոյութեան տասներորդ տարուայ սկզբին ունենում է երկու նախակրթարան և հինգ հիմնական դասատուն՝ մի քանի զուգընթացներով, որոնց մէջ սովորող սանուհիների թիւը հասնում էր 219 աշակերտուհու։ Դպրոցի այդ տարուայ մուտքի գումարը հասնում էր 21 հազար րուբլու, ծախքի գումարը 10 հազար րուբլու և, ուրեմն, խնայողութիւնը կամ պահեստի գումարը տասն և մէկ հազար րուբլու։

Մենք այստեղ կանգ ենք առնում... Փաստն այնքան պերճախօս է, որ նրա մասին երկար ճառելն աւելորդ է. գտնուել են անձնանուէր ու գաղափարական մարդիկ, գործի են ձեռնարկել և յաջողութիւն են ունեցել։ Դպրոցը աճել է ու բարգաւաճել, ապրել է աւելի քան երեք տասնեակ տարի, բացել է վեցերորդ հիմնական դասատուն, գանձել է 20 հազարի չափ պահեստի գումար... յետոյ վերայ են հասել փորձութեան օրերը և... նա փակուել է։ «Հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարք հօտին»։ Հարուածն այնպէս ուժեղ է եղել, որ ոչ միայն սանուհիներն են ցրուել, այլ և դպրոցը հիմնիվեր կործանուել է. նրա հարուստ մատենադարանի մի մասն անցել է Ներսիսեան Դպրանոցին, բայց մի մասն էլ վաճառքի ու կողոպտման է ենթարկուել, նրա ֆիզիքական կաբինէտը կորուստից փրկելու համար ուղարկուել է Ս. Էջմիածնի Ճեմարանին, նրա թանկարժէք կահ-կարասիքը փոխուել կամ կորսուել են, մինչև անգամ նրա դպրոցական շէնքը, անտէր ու ամայի մնալով, այնպիսի աւերման ու քայքայման է ենթարկուել, որ պօլիցիական իշխանութիւնը հրամանագրել է քանդել ու բառնալ մէջ տեղից։

Այսպէս է եղել այս հոյակապ ձեռնարկութեան սկզբնաւորութիւնը, աճումն ու կործանումը։

---

## II.

## ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ.

*Ամենքիս յայտնի են այն իրարանցումները, որ տեղի ունեցան Հայոց դպրոցների փակման և եկեղեցական կալուածների գրաւման օրերին. յայտնի են նմանապէս այն խանդավառ ոգևորութիւնը, յոյսերն ու ակնկալութիւնները, որոնք եկան փոխարինելու փորձութեան օրերին, երբ՝ շնորհիւ բարեխօս միջնորդութեան Իշխան Փոխարքայի՝ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որ բացուեն հայոց դպրոցները։ Ոգևորութիւններն այնքան անկեղծ, յոյսերն այնքան իրական և ակնկալութիւններն այնչափ հիմնաւոր էին թւում, որ ամեն մինը մեզանից հաւատի ու համոզուած էր, որ փորձութեան օրերը խրատած ու կատարելապէս լրջացրած կը լինէին հայ մարդուն իւր անելիքների, իւր պարտականութիւնների և իրաւունքների վերաբերութեամբ դէպի մանուկ սերնդի կրթական գործը։*

*Ոգևորութիւնն սկզբում, արդարև, մեծ էր և յուսատու։*

*Չկամենալով խօսել ու վերլուծել ընդհանուր երևոյթները՝ լրագրութեան զարգացումը, մանկական գրականութեան ճոխացումը, դպրոցների համեմատական յաւելումը գիւղերում և քաղաքներում, մենք պիտի ցուցադրենք և մատնանշենք այն ոգևորութիւնը, որ սկզբում նկատւում էր նաև Մոզնու ծխական համայնքի մէջ՝ Գայիանեան դպրոցի վերաբացումը շտապեցնելու վերաբերութեամբ։ Յիշում ենք այն բազմամարդ և աղմկալի ծխական ժողովները, ուր ճառախօսներն աշխատում էին ապացուցանել, որ նախկին Գայիանեան դպրոցի գումարները, որոնք այդ ժամանակ դեռ ևս գտնւում էին պահեստի մէջ և որոնց տէրերը համարւում էին դպրոցի նախկին վարչութեան կենդանի անդամները, պէտք է օր առաջ ստացուին, որպէս զի դպրոցի բացումը շուտով տեղի ունենայ։ Յիշում ենք այդ ժողովները, ուր ճառախօսներն ապացուցանում էին իրանց իրաւունքները, խոստանում էին նպաստել դպրոցին, ծխական տուրք վճարել, նոր շէնք շինել, պահպանութեան մնայուն աղբիւրներ ստեղծել, եղած դրամագլուխը մեծացնել...*

*Եւ մենք լսում էինք ու հաւատում։*

*Վերջապէս երկար բանակցութիւններից յետոյ՝ Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձութեանը յաջողւում է ստանալ Գայխանեան դպրոցի գումարը՝ 21,175 ր. 54 կոպ. և, այդ հիմնական գումարը իւր ձեռքումն ունենալուց յետոյ, նա, յոյսը դրած ծխականների խոստման ու աջակցութեան վրայ, 1906 թ. սեպտեմբերին Գայխանեան դպրոցի համար վարձում է մի տուն Պասկեւիչեան փողոցում՝ տարեկան 2,580 րուբլով և այդ թուին էլ բաց է անում դպրոցը։ Դպրոցի դռները բացւում են, բայց ոչ իւր նախկին տեղը՝ ոչ Մողնու գաւթում, այլ հեռու իւր բնավայրից, Թիֆլիսի մի թաղամասում։*

*Դպրոցն այդ տարին ունենում է չորս բաժանմունք II, III և VI տարուայ դասընթացքով և մի զուգընթաց VI բաժանմունքի համար (տես արձանագրութիւն № 26, 1906 թ. սեպտեմբեր 17-ից)։*

---

III.

## ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ.

*Ասացինք, որ մեր նախորդներին յաջողւում է բանալ Գայխանեան դպրոցի դռները միայն 1906 թ. սեպտեմբերին։ Երկու տարուց յետոյ, 1908 թ. սեպտեմբերին, նրանք իրանց պաշտօնավարութեան ժամանակը լրացած համարելով, լրագրութեանց մէջ յայտարարութիւն են տալիս և Մողնու ծխականներին ժողովի հրաւիրում։ Ժողովը տեղի է ունենում նոյն թուի դեկտեմբերի 28-ին։*

*Արդարև վատ չէր լինի ծանօթացնել հայ հասարակութեան ընդհանրապէս և Մողնու ծխականներին մասնաւորապէս՝ մեր նախորդների երկու ու կէս տարուայ գործունէութեան մանրամասնութեանց հետ, եթէ մեր մտադրութիւնը լինէր այդ դպրոցիս վերաբացման յաջորդական պատմութիւնը. բայց մեր ծրագիրն աւելի սահմանափակ է. մենք կամենում ենք դնել ընթերցողների առաջ մեր գործունէութեան համառօտ պատկերը*

միայն, մանրամասնութիւններն ապագայ պատմագրողին թողնելով։ Այսպէս վարուելու մենք մի քանի պատճառներ ունենք. մեզ չի պատկանիլ գնահատութեան ենթարկել մեր նախորդների գործունէութիւնը. նոյնչափ անվայել և անյարմար է այնպիսի դիտողութիւններ անել, որպէս թէ համեմատութեան ենք դնում մեր արածները մեր նախորդների արածների հետ. այն էլ բաւական է, եթէ մեզ յաջողուի պարզերես դուրս գալ այն հասարակութեան, այն համայնքի առաջ, որոնց ձայնով ու վստահութեամբ պաշտօնի ենք կոչուած։

Հոգաբարձութեան ներկայ կազմը, ինչպէս ասացինք, ընտրուած է 1908 թուի դեկտեմբերի 28-ին։ Մեր հաստատութեան թուղթը Սրբազան առաջնորդի կողմից ստացուած է 1909 թ. փետրուարի 20-ին № 208։

Սրբազան առաջնորդը իւր առաջադրութեան մէջ յիշում է այն պատճառները, որոնք ստիպել են նրան՝ ուշացնել ծխական ժողովի ընտրութեան վաւերացումը.

«Թէպէտ անհրաժեշտ իսկ էին առ խնդիր հաշուոց 'ի նորոյ հրաւիրել զծխականս 'ի ժողով, առ ի պարզել զմութ կէտս այդորիկ հաշուական խնդրոյ, առաւել մեկին պարզաբանութեամբ, 'ի մասին որոյ ի' 1907 ամին 'ի 25-ն նոյեմբերի № 1105, և 'ի 1909 ամի 'ի 10 և 'ի 17 յունուարի №№ 24 և 84 առաջադրութեամբ պահանջեալ էր մեր 'ի նախկին հոգաբարձութենէ, և ապա առնել հաստատութիւն, սակայն 'ի նկատի առեալ՝ զի պարզաբանութիւն խնդրոյ կարէ երկարել և յայսմ միջոցս, առ բացակայութեամբ ժողովրդական ներկայացուցչութեան, զպրոցն, զրկեալ 'ի մերձաւոր հսկողութեանց և հոգածութեանց, վտանգեսցի։ Զայդոսիկ զծանրակշիռ հանգամանս առաջի աչաց ունելով՝ բարւոք համարեցաք հաստատել զմեծապատւութիւն Ձեր 'ի պաշտաման եկեղեցական ծխական հոգաբարձութեան Ս. Գէորգ եկեղեցւոյն Մողնւոյ»։

Այնուհետև Սրբազան Առաջնորդը յոյս յայտնելով, որ նոր Հոգաբարձութիւնը կաշխատի արդարացնել ընտրող ժողովրդի ակնկալութիւնները, մաքառելով այն անտարբերութեան դէմ, որ ներկայումս նկատուում է հայ հասարակութեան համարեա

բոլոր խաւերում դէպի կրթական գործը, իսկ Առաջադրութեամբ դնում է Հոգաբարձութեան առաջ հետեւեալ կատեգորիք պահանջները։

1) «Զայս եւ կարեւոր համարեմք 'ի յուշ հոգաբարձութեանդ առնուլ, թէ ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, դրամագլուխ Գայիանեան դպրոցին յանձնեցաւ հոգաբարձութեան այնու պայմանաւ միայն, զի դրամագլուխն տացցի յարքունի դրամատունն 'ի շահեցողութիւն իբր անձեռնմխելի, իսկ տոկոսիք դրամագլխոյն գործադրել վասն անհրաժեշտ պիտոյից դպրոցին։ Սակայն 'ի հաշուետուութենէ չերեւի եդեալ դրամագլուխն 'ի դրամատունն իբր անձեռնմխելի։ Արդ նորընտիր հոգաբարձութիւնդ հրաւիրեմք զայդոսիկ հանգամանս ունել ի նկատի։ Եւ առաջադրեմք դմին առ այս խնդիր հրաւիրել զծխական ժողով, պարզել զխնդիր դրամագըլխոյն, զի հնար լիցի յապագային զդէմ թեր և դէմ առարկութեանց առնուլ և զդպրոցական վարչութիւն ազատ պահել 'ի թիւրիմացութեանց։ Հրաւիրել զծխականս եւ ամենայն հնարս ի կիր արկանել, զի նուիրաբերութեամբ ծածկեսցի փոխարինաբար ծախսեալն 'ի դրամագլխոյն՝ գումարն յօգուտ դպրոցին»։

2) «Այլ և 'ի հաշիւ հոգաբարձութեան նկատելի լինի, զի հոգաբարձութիւն 'ի տարին ծախսէ 2,580 րուբլի 'ի վարձ դպրոցական շինութեան, առ այս խնդիր հրաւիրեմք զհոգաբարձութեանդ ուշադրութիւն, զի զխնդիր շինութեան դպրոցին առաջի արասցէ ծխական ընդհանուր ժողովոյն, և նպատակայարմար որոշմամբ զխնդիր դրամագլխոյն կարգադրել, զի յաւէտ մնասցէ անխախտ. այն է՝ փոխանակ զդրամագլուխն չնչին տոկոսեօք պահել 'ի դրամատան, լաւուք իսկ լիցի, այդու դրամօք վերանորոգել զԳայիանեան դպրոցն եւ ազատել զայն 'ի վճարմանէ 2,580 րուբլի տարեկան վարձուց եւ այդու միայն դրամագլուխն մնայ անձեռնմխելի արդիւնաբեր շինութեամբ, 'ի շահ դպրոցին, որ եւ ազատ դպրոցն մնայ 'ի վճարմանէ վարձուց»։

3) Նոր Հոգաբարձութեան լուրջ ուշադրութեանն է յանձնում Սրբազանը ուսումնարանի ապահովութեան խնդիրը, որից մեր դպրոցը գլխովին զուրկ է և առանց որի չի կարող ապրել ու յարատեւել որեւէ կրթական հիմնարկութիւն։

---

## IV.

## ՆՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Լսելով Սրբազան Առաջնորդի գրութեան բովանդակութիւնը և ծանօթանալով դպրոցի նիւթական դրութեան հետ, Հոգաբարձութիւնս ցաւ ի սիրտ համոզւում է, որ դպրոցը դրած է վերին աստիճանի անմխիթար, մինչև իսկ վտանգաւոր դրութեան մէջ... անմխիթար և վտանգաւոր էր դպրոցի դրութիւնը, որովհետև նրա անձեռնմխելի գումարն այնքան էր նուազել, որ Հոգաբարձութիւնը այդ տարուայ (1909 թ.) դպրոցական պահանջներին, ըստ նախահաշուի, կատարումն տալուց յետոյ, տարուայ վերջին պիտի ունենար. մայր գումարից սոսկ ութ հազար րուբլու մնացորդ։ Այս հանգամանքը բացարձակ վտանգ էր սպառնում դպրոցի գոյութեանը, որովհետև եթէ առաջին երեք տարուայ ընթացքում, երբ դպրոցի դասարանների թիւը համեմատաբար քիչ էր, ուսումնարանի ծախքերն անձեռնմխելի գումարից կլանել էին 13 հազար րուբլի, պարզ է, որ այլևս երկու տարի անցած՝ դպրոցը չը պիտի ունենար և ոչ մի կոպէկ պահեստի դրամ։

Ի՞նչ պէտք էր արած։

Կար միայն երկու ճանապարհ՝ կամ դիմել Սրբազան Առաջնորդին ու ծխականներին, պարզել դրութիւնը, մերժել պատասխանատուութիւնը՝ և հրաժարուել պաշտօնից և կամ, առանց պատասխանատու համարելու իրան անցեալի վերաբերութեամբ, ջանք անել, հանել դպրոցը իր դժուարին կացութիւնից և դնել նրան համեմատաբար աւելի անվտանգ կացութեան մէջ։

Հոգաբարձութիւնն ընտրեց երկրորդ ճանապարհը՝ պատրաստ մաքառելու ամէն արգելքների դէմ։

Եւ դուք կը տեսնէք, որ մենք ամբողջ երեք տարի գործ ենք ունեցել մի շարք դժուարութիւնների հետ, և աւելի կամ պակաս յաջողութեամբ յաղթահարել ենք դոցա։

---

## V.

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ.

1909 թուի վերջերին լրանում էր այն պայմանաժամը, որ կնքել էր նախկին Հոգաբարձութիւնը իշխանուհի Արղութեանի հետ՝ դպրոցի համար բնակարան վարձելիս։ Մենք պէտք է հոգայինք, որ 1910 թ. սեպտեմբերին դպրոցը տեղափոխուէր մի նոր բնակարան. անհնարին, աններելի և անթոյլատրելի էր վերանորոգել պայմանը՝ նախկին բնակարանի տէրերի հետ և վճարել տարեկան 2,500 րուբլու չափ վարձագին։ Հոգաբարձութիւնն շտապեց ժողովի կանչել ծխականներին, բայց ժողով գումարելուց առաջ դիմեց ճարտարապետ Օզերովին և խնդրեց մանրազնին քննութեան ենթարկել դպրոցի նախկին շինութիւնը Մողնու եկեղեցու գաւթում։ Ծերունի ճարտարապետը, որի հեղինակութիւնը կասկածից դուրս էր, եկաւ այն մխիթարական եզրակացութեան, որ դպրոցական շէնքի կէս մասը կարելի է յաջողութեամբ նորոգել և յարմարացնել կրթական պահանջներին, իսկ միւս կէսը—հիւսիսային մասը—հարկաւոր կը լինի հիմնովին քանդել և նրա տեղը նոր շինութիւն կառուցանել, կապելով ու միացնելով նրան հնի հետ։ Եւ որովհետև ճարտարապետի մանրամասն զեկուցումը համոզեց Հոգաբարձութեան, որ ամառային ամիսների ընթացքում կաւարտուի հին շինութեան հարաւային մասի նորոգութիւնը, ուստի Հոգաբարձութիւնն, առանց այլ ևս յապաղելու, ժողովի հրաւիրեց ծխականներին, ծանօթացրեց նրանց՝ գործի դրութեան հետ, ստացաւ նրանց համաձայնութիւնը և ձեռնարկեց շինութեանը։ Սեպտեմբերի առաջին օրերին Գայեանեան դպրոցի հին շինութեան հարաւային մասը բոլորովին պատրաստ լինելով, դպրոցը Պասկեւիչեան փողոցից տեղափոխուեցաւ Մողնու գաւիթը։

Շինութեան այդ մասի վերանորոգութիւնն արժեցաւ աւելի պակաս, քան թէ վճարում էին Գասկևիչեան փողոցի բնակարանին մի տարուայ համար։ Աւել է թէ՝ եթէ այդ գործողութիւնը կատարուած լինէր 3 տարի առաջ, դպրոցը մօտ 8,000 ր. խնայողութիւն կունենար։

Դպրոցի հիւսիսային մասի վերաշինութիւնն աւարտուեց հետևեալ տարին։ Այսպիսով այն շէնքը, ուր ներկայումս զետեղուած է մեր դպրոցը, երկու տարուայ անխոնջ ջանքերի հետևանք է։

## Ն ա խ ա հ ա շ ի ւ ը.

Առաջ բերենք այստեղ դպրոցական շէնքի նախահաշիւը՝ ըստ նախագծի և շինութ. վրայ արած ծախքերը՝ ըստ գործադրութեան։

| | | | |
|---|---|---|---|
| Հին շէնքի վերանորոգութեան համար նախահաշուով որոշուած էր՝ . . . . . | 2,000 | ր. — | կ. |
| Նոր շէնքի կառուցման համար. . . . . . | 10,200 | » — | » |
| Յատակագիծը կազմելուն . . . . . . . . | 122 | » — | » |
| Ճարտարապետի վարձատրութիւն . . . . | 500 | » — | » |
| Նախապատրաստական և մանր ծախքերի . | 200 | » — | » |
| Ընդամէնը՝ | 13,022 | ր. — | կ. |

## Հ ա շ ի ւ ը.

Ահաւասիկ և գործադրութեան հետևանքը՝

| | | | |
|---|---|---|---|
| Հին շինութեան նորոգութեան և նորի կառուցման վրայ ծախք եղած է . . . | 12,353 | ր. 79 | կ. |
| Յատակագիծը կազմելուն . . . . . . | 122 | » — | » |
| Ճարտարապետի վարձատրութիւն . . . . | 500 | » — | » |
| Շինութեան առիթով եղած նախապատրաստական և մանր ծախքեր . . . . | 181 | » 05 | » |
| Ընդամէնը՝ | 13,156 | ր. 84 | կ. |

Այսպիսով տարբերութիւնը վերոյիշեալ երկու գումարների կազմում է 134 ր. 84 կոպ., որը արդիւնք է այն անակնկալների, որոնք անխուսափելի են ամեն մի շինութեան ժամանակ։

Այսպէս՝ շինութեան հիմքը դնելիս, գետնի տակ բացուեցան հին շէնքերի մնացորդներ ու դատարկութիւններ. այնուհետև պէտք եղաւ պատրաստել ժամանակաւոր արտաքնոցներ և այլն...

---

VI.

## ՆԱԽԱՃԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԵՏ.

Կենդրոնացնելով իր ուշադրութիւնը շինութեան հարցի շուրջը, Հոգաբարձութիւնը չէր կարող միևնոյն ժամանակ ուշադրութեան չառնել ուսումնարանի կրթական մասը, որի հետ ի մօտոյ ծանօթանալու համար՝ նա իւր պաշտօնավարութեան հէնց առաջին օրերին խնդրում է դպրոցի տեսուչ պ. Ս. Աբովեանին՝ ներկայացնել դպրոցի ներքին կեանքի տեղեկագիրը՝ թէ ընդհանուր առմամբ և թէ մանաւորապէս լուսաբանելով նրա ուսումնական մասի և մանկավարժական մարմնի գործունէութեան մանրամասնութիւնները։

Տեսչի ընդարձակ զեկուցումից առաջ ենք բերում հետևեալները։

Այս 1908—09 դպրոցական տարուայ սկզբին Գայիանեան օրիորդաց դպրոցն ունէր հինգ դասարան, որոնք էին՝ երկրորդ նախակրթարան, առաջին, երկրորդ և երրորդ հիմնական դասարաններ։ Վերջին (երրորդ) դասարանն ունէր և զուգընթաց։

Բոլոր աշակերտուհիների թիւն էր 177 հոգի։

Պաշտօնավարում էին հինգ ուսուցչուհի և հինգ ուսուցիչ։

Աւանդւող առարկաներն էին՝ կրօն, հայոց, ռուսաց և ֆրանսերէն լեզուներ. թուաբանութիւն, երկրաչափական ձևագիտութիւն, իրագննութիւն և բնական պատմութիւն, հայրենագիտութիւն և ընդհանուր աշխարհագրութիւն. հայոց, ռուսաց և ընդհանուր պատմութիւն. նկարչութիւն, երգեցողութիւն և ձեռագործ։—Բոլոր դասերի թիւն էր 152 շաբաթական։

Վերոյիշեալ տեղեկագիրը լսելուց և իւր տնտեսական ծանր խնդիրները որոշ չափով կարգադրելուց յետոյ՝ Հոգաբարձու-

թիւնը յանձնարարում է իւր անդամներից երկուսին՝ յաճախել դասերին և իրանց տպաւորութիւններն ու տեղեկութիւնները գրաւոր յայտագրել Հոգաբարձութեան։

Իրանց համառօտ տեղեկագրի մէջ Հոգաբարձութեան լիազօրները կանգ են առնում, ի միջի այլոց, դպրոցում նկատուած մի քանի թերութիւնների վրայ, որոնք առաջ են եկել այն հանգամանքից, որ դպրոցի վերաբացման առաջին օրերին՝ նախկին Հոգաբարձութիւնն ստիպուած է եղել, համարեա անխտիր ընդունել Գայիանեան դպրոցի նախկին սանուհիներին նորաբաց ուսումնարանը և տեղաւորել նրանց եղած դասարաններում, յուսալով ապագայում փոքր առ փոքր հարթել նրանց մէջ եղած անհամաչափ նախապատրաստութիւնները և ապագայում ունենալ միապաղաղ ու համաձայն կոմպլեկտ աշակերտուհիների՝ ամեն մի դասարանում։

---

## VII.

## ՀԱՄԱՐՁԱԿ ՎՃԻՌՆԵՐ.

Լսելով վերև առաջ բերած զեկուցումները և քննութեան առնելով դպրոցի կրթական ու նիւթական դրութիւնը, Հոգաբարձութիւնը երկու կարևորագոյն որոշումներ արեց. ա) դպրոցական շէնք կառուցանել՝ ինչպէս ասացինք վերը և բ) դպրոցը վերածել միջնակարգի։

Կարևոր է մի փոքր կանգ առնել և քննել այն պատճառները, որոնք ծառայեցին որպէս հիմք՝ վերոյիշեալ համարձակ վճիռները կայացնելու։ Արդարև եթէ դպրոցական շէնք կառուցանելը, որպէս մի ձեռնարկութիւն, որ պիտի պահանջէր միանուագ գործողութիւն և գործելու սահմանափակ ժամանակամիջոց, դեռ ևս իրականանալու հաւանականութիւն էր ներկայացնում, ապա ինչո՞վ կարելի էր արդարացնել Հոգաբարձութեան վճիռը՝ բարձրացնել դպրոցը միջնակարգ աստիճանի, քանի որ նա գիտէր, որ Գայիանեան ուսումնարանը գոյութեան ոչ մի մնայուն աղբիւր չունի։

Այս հարցի պատասխանը հէնց իւր մէջ է գտնւում։ Հոգաբարձութիւնը, իւր վերոյիշեալ վճիռն արձակելիս, համոզուած էր և այսօր էլ համոզուած է, որ Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցը գոյութեան ոչ մի մնայուն աղբիւր չունի։ Եւ ոչ այսքան միայն. Հոգաբարձութիւնը իրազեկ էր և է, որ գոյութեան մնայուն աղբիւր չունենալուց զատ՝ դպրոցը իւր ներկայ ծաւալով ամենայն տարի տալիս է բաւական խոշոր դեֆիցիտ, որը, անկասկած, պիտի աճէ տարէց-տարի, եթէ նրա դասարանների թիւն աւելանալու լինի։

Բայց սրա հետ միասին Հոգաբարձութեան համար պարզ էր և ա՛յն, որ առանց մնայուն աղբիւրի, միևնոյն է, անհնարին պիտի լինի մինչև անգամ մի տարրական ուսումնարան պահել։ Նայեցէք ձեր շուրջը՝ արդեօք դուք կարո՞ղ էք ցոյց տալ մի թէկուզ միդասեան ուսումնարան, որ ոչ տուն ունենայ և ոչ փող,—ու ապրի։ Չկայ այդպիսին և չի կարող լինել։ Ուրեմն տուն պէտք է ունենայինք. այս պարզ էր օրը ցերեկի պէս։ Եւ տուն ունենալու համար եթէ արգելքներ կային, սրանց պիտի յաղթահարէինք, դոքա բոլորը ժամանակաւոր արգելքներ էին, որոնցից Հոգաբարձութիւնը չը պիտի վախենար։

Եւ դուք տեսաք, որ Հոգաբարձութիւնը, թէև ոչ առանց մաքառումների, գլուխ բերեց դպրոցական շէնքի կառուցումը։

Աւելի լուրջ դժուարութիւններ էր ներկայացնում ուսումնարանի յարատև գոյութեան խնդիրը, լինէր այդ ուսումնարանը տարրական թէ միջնակարգ։

Արդ՝ կարո՞ղ էր Հոգաբարձութիւնը առանց փողի մի տարրական ուսումնարան պահել։

Պատասխանում ենք, որ չէր կարող։

Չէր կարող, որովհետև այդպիսի մի ձեռնարկութիւն զուրկ կը լինէր գոյութեան իրաւունքից։ Չէր կարող, որովհետև այդպիսի դպրոցին 35—40 րուբլի ուսման վարձ չէին տալ ծնողները։ Չէր կարող, որովհետև այդպիսի դպրոցի համար դուք չէիք վըստահանալ դիմումներ անել, աղաղակ բարձրացնել, փող ժողովել։

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում միջնակարգ դպրոցը, այն էլ մի դպրոց, որ ունեցել է փառաւոր անցեալ, որ զգալի ծառայութիւններ է մատուցել ազգին։ Միջնակարգ ծաւալով նա, այդ դպրոցը, հանդէս է բերում մի վսեմ նախագաղափար, որը կարող է իւր վրայ կենդրոնացնել համայն հայու-

թեան ուշադրութիւնը, որովհետև այդ պատկերի, այդ կոչման տակ նա պատկանում է ոչ թէ Մողնու ծխականներին, այլ Կովկասի համայն հայութեանը. նա այդ հայութեանն է ծառայել անցեալում, ուրեմն և այդ հայութեանը դիմելու, նրանից պահանջներ անելու բարոյական իրաւունքներ կունենայ միայն այն դէպքում, եթէ իւր ծառայական պարտականութիւնները կատարելու համապատասխան դիրք ու կոչումն ունենայ։

Ահա թէ ինչու մենք վճռեցինք՝ հասցնել Գայիանեան օրիորդաց դպրոցը իւր նախկին աստիճանին...

Եւ հասցրինք։

Մենք հաճութեամբ յիշատակում ենք, որ ներկայումս Գայիանեան դպրոցն ունի վեց հիմնական դասատուն, որքան ունեցել է առաջ, և երեք նախակրթարան՝ երկու նախակրթարանի դիմաց, որ նա ունեցել է հնումը։

---

## VIII.

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԷՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ.

Մենք կարևոր ենք համարում համառօտակի պատմել այն միջնադէպքերը, որոնք տեղի ունեցան ուսումնարանական շէնքի կառուցման ժամանակ։ Քանի դեռ ևս ձեռնամուխ չէինք եղած շինութեան, ամենայն կողմից մեզ խրախուսում և հաւատացնում էին, որ հարկ կը լինի միայն շինութեան հիմքը դնել և հասարակութեան գիտակից տարրը անմիջապէս օգնութեան կը գայ մեզ։ Բայց իրողութիւնը բոլորովին ուրիշ ապացոյցներ տուեց։ Շինութիւնն սկսեցինք, նրա մի մասը վերանորոգեցինք, դպրոցը տեղափոխեցինք Մողնու եկեղեցու գաւիթը, շինութեան հիւսիսային մասը հիմնովին քանդեցինք, նրա տեղ նորը բարձրացրինք կիսով չափ և բոլոր այդ ժամանակամիջոցին, մի ամբողջ տարի, թէ բանիւ և թէ գրով բազմաթիւ դիմումներ արինք այս ու այն անձանց, այս ու այն հիմնարկութեանց, բայց բոլորն ապարդիւն։

Դպրոցի հոգաբարձութիւնը կրիտիքական դրութեան մէջ էր։ Ծխական ժողովը, որ մենք քանիցս գումարեցինք, անզօր

հանդիսացաւ՝ մեզ օգնելու։ Կենդանիներից յուսահատուր, մենք ստիպուած եղանք դիմել մեռեալների օգնութեան։ Եւ մեռեալներն օգնեցին մեզ։ Սա հայ կեանքի ճակատագիրն է. սակաւ է պատահում, որ կենդանիներն օգնեն նրան, հայի բարերարները, չնչին բացառութեամբ, մեռեալներն են։ Թող օրհնեալ լինի նրանց յիշատակը։

Այս անգամ մեզ ճգնաժամից հանողը հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի դերեզմանն էր։ Այս երջանկայիշատակ այրը, ինչպէս յայտնի է, բաւական խոշոր գումար էր թողել կրթական նպատակներով։ Ի յարգանս այդ բարենպատակ գործի՝ նրա երկրաւոր կեանքի մնացորդներն ամփոփել էին Մողնու եկեղեցու գաւթում։ Մենք դիմեցինք հանգուցեալի կտակակատար պ.պ. Թեան Խաչատրեանին և Ալէքսանդր Մելիք-Ազարեանին և, որոշ ձեւականութիւններ կատարելուց յետոյ, ստացանք նրանցից 5000 րուբլի՝ յօգուտ դպրոցական շէնքի կառուցման։ Այս առաջին և ամենախոշոր նպաստն էր, որ դպրոցն ստացաւ վեհանձն կտակակատարներից։ Բայց ո՛չ՝ այդ նպաստն ստանալուց առաջ մեր ձեռակերտը բաղդ ունեցաւ ստանալ նաև Մատթէոս Բ. Նորընտիր Հայրապետի օրհնութիւնը և նրա հայրապետական լուման—հինգ հարիւր րուբլի յօգուտ շինութեան։

Դնում ենք այստեղ Հոգաբարձութեան տեսակցութեան մանրամասնութիւնները Նորին Վեհափառութեան հետ, քաղելով այդ Դիւանի արձանագրութիւններից.

«Յունիսի 26-ին 1910 թուի, Սրբազան Առաջնորդի և Թիֆլիսի բոլոր եկեղեցիների երեցփոխանների ընտրութեամբ պ.պ. Ս. Կիւլպէնկեան և Ն. Տէր-Ղևոնդեան գնացին ընդառաջ Ն. Վ. Սրբազնագոյն Կաթուղիկոսի, մինչև Սանահին կայարանը։ Վեհափառի Թիֆլիս ժամանելուց մի շաբաթ անցած, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց ընդունել Գայիանեան դպրոցի Հոգաբարձութիւնը հետևեալ անձինքներից—Տէր-Ղևոնդեան, Կիւլպէնկեան, Թադէոսեան և տեսուչ Աբովեան։ Հոգաբարձութեան փոխնախագահ պ. Տէր-Ղևոնդեանը պատիւ ունեցաւ մանրամասնօրէն զեկուցանել Վեհափառին դպրոցի նիւթական և կրթական կացութեան և միամեայ գործունէութեան մանրամասն տեղեկագիրը և իր բանախօսութեան վերջում



3390
A II/67246
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ Ի ԳՐԱԿԱՆ. ԻՆՍՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հոգաբարձութեան անունից խնդրեց Նորին Վեհափառութեանը՝ տալ իւր բարձր հաւանութեան շօշափելի ապացոյցները, կարգադրելով հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի գերեզմանին յատկացրած հողաբաժնի վերաբերութեամբ ծագած խնդիրը։ Նորին Վեհափառութիւնը, Սրբազան Առաջնորդի լրացուցիչ զեկուցումից ևս ծանօթանալով այս խնդրի մանրամասնութեանց հետ, բարեհաճեց հրամայել՝

ա. Պայմանական ձևով վճարուած հինգ հազար րուբլին համարել վարձագին այն հողաբաժնի, որի վրայ կառուցուած է հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի մահարձանը։

բ. Առաջարկել կտակակատար պ. պ. Ա. Մելիք-Ազարեանին և Թևան Խաչատրեանին, լրացնել այդ գումարը դարձեալ մի հինգ հազար րուբլով յօգուտ դպրոցի»։

«Վեհափառը պատուիրեց Սրբազան Առաջնորդին իւր այս կարգադրութեանց մասին առանց յետաձգութեան յայտնել պ. պ. կտակակատարներին»։

«Նորին Վեհափառութիւնը յայտնեց իր «անսահման գոհունակութիւնն» ամբողջ Հոգաբարձական կազմին՝ նրանց խաղաղ և անխոնջ գործունէութեան համար և որպէս ապացոյց իւր բարեհաճութեան՝ նուիրեց յօգուտ Գայիանեան դպրոցի վերաշինութեան հինգ հարիւր րուբլի»։

«Յուլիսի 7-ին Նորին Վեհափառութիւնը Սրբ. Առաջնորդի և իւր շքախմբի անդամների ուղեկցութեամբ բարեհաճեց այցելել Գայիանեան դպրոցը և, դիտելով ամբողջ շինութիւնը, յայտնեց իր գոհունակութիւնը Հոգաբարձութեան»։

Արձանագրութիւնից առաջ բերած վերոյիշեալ քաղուածքը ցոյց է տալիս, թէ որպիսի ջերմ վերաբերմունք ցոյց տուեց հանգուցեալ Հայրապետը դէպի Գայիանեան դպրոցը և թէ ինչ ակնկալութիւններ ունէր դպրոցի Վարչութիւնը Նորին Վեհափառութեան հովանաւորութիւնից։ Բայց մահը խլեց մեզանից նրբամիտ և գորովագութ Հայրապետին։ Վեհափառի մահից յետոյ, բարեբաղդաբար, գտնուեցին մարդիկ, որոնք պարտականութիւն զգացին կատարումն տալ Հայրապետի ցանկութեանը՝ երկրորդ հինգ հազարի վերաբերութեամբ։ Եւ դպրոցիս Վար-

չութիւնը շնորհապարտ է այդ անձանց՝ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանին, Ս. Սինօդի անդամներին, Թեմիս կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսին և կտակակատար պ. պ. Թևան Խաչատրեանին և Ալէքսանդր Մելիք-Ազարեանին։ Մենք պատճառներ ունենք առանձնապէս շեշտելու, որ առանց բարեհաճ միջնորդութեան Մեսրոպ եպիսկոպոսի և բարեացակամ ցանկութեան պ. Թևան Խաչատրեանի՝ Գայիանեան դպրոցը չէր ստանալ երկրորդ հինգ հազար (5000) րուբլին՝ յօգուտ ուսումնարանի։ Եւ դպրոցի Վարչութիւնը այս առատաձեռն նպաստի դիմաց պարտք համարեց պահել դպրոցում յանուն Միրզաջան Խաչատրեանի հինգ որդեգրուհի դպրոցիս ամենաչքաւոր, բայց և ամենայառաջադէմ մանուկներից, որոնք պիտի կոչուին «Սանուհիք հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի»։

---

## IX.

## ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵՐԱՐՈՂՆԵՐԸ.

Մինչև այստեղ ասածներից ընթերցողը մօտաւորապէս գաղափար կը կազմէր՝ որպէս մեր դպրոցի դրութեան, այնպէս և Հոգաբարձութեան գործունէութեան մասին։ Մեր պաշտօնավարութեան ընթացքում մենք, արդարև, հանդիպել ենք մեծամեծ դժուարութիւնների, բայց միաժամանակ այդ դժուարութիւններին յաղթելու համար մենք լիապէս օգտուել ենք հայ-հասարակութեան համակրութիւնից և բարեմիտ անձանց առատաձեռն օժանդակութիւնից։ Սկզբում արդարև հասարակութեան վերաբերմունքը դէպի մեր դպրոցը վերին աստիճանի սառն էր, մինչև անգամ անտարբեր. Գայիանեան դպրոցի գոյութիւնը, կարծես, մոռացութեան էր տրուած, բայց վերջերում հասարակութեան վերաբերմունքը սկսեց աւելի ու աւելի ջերմ արտայայտութիւն ստանալ և մեր եռամեայ գործունէութեան վերջում դպրոցիս ստացած նպաստների գումարը հասաւ մօտաւորապէս քսան հազար րուբլու։—Առաջ ենք բերում այստեղ մեր ուսումնարանին նպաստողների անուանական ցանկը։

I. *Միանուագ նպաստներ ստացել ենք *).*

| | | |
|---|---|---|
| Վեհափառ Մատթէոս երջանկայիշատակ Կաթողիկոսից . | 500 | ր. |
| Հանգուցեալ Ա. Ի. Մանթաշեանի զաւակներից . . . | 8,000 | » |
| Հանգ. Միրզաջան Խաչատրեանի կտակակատարներից . | 5,000 | » |
| Նոյն Խաչատրեանի կտակակատարներից . . . . . . | 5,000 | » |
| Պարոն Աւան-Իւզբաշեանից . . . . . . . . . . | 300 | » |
| Հանգուցեալ Վարդանեանի զաւակներից . . . . . . | 200 | » |
| Պարոն Ալէքսանդր Ղորղանեանից . . . . . . . . | 100 | » |
| Թիֆլիսի Կալուածական Վարկի Ընկերութիւնից . . | 100 | » |
| Պարոն Պետրոս Քալանթարեանից . . . . . . . . . | 100 | » |
| Բժիշկ Քոչարեանի այրիից . . . . . . . . . . | 25 | » |
| Տիկին Ծաղիկ Փիրումեանից՝ ի յիշատակ մօրը . . . | 25 | » |
| Հանգուց. Զաքարեա Գրիգորեանի այրիից . . . . . | 50 | » |
| Տիկին Վ. Բարխուդարեանից՝ ի յիշ. Զ. Գրիգորեանի. | 30 | » |
| Բժիշկ Արզումանեանից նոյն նպատակով. . . . . . | 18 | » |
| Հմայեակ Վահանեանից՝ իւր քրոջ յիշատակին . . . | 50 | » |
| Պարոն Գաբրիէլ Կաֆեանից . . . . . . . . . . . | 25 | ր. |

II. *Մշտական նպաստ տուողներ՝ յօգուտ որբեգրուհիների.*

| | | |
|---|---|---|
| Տիկ. Վարվառա Թամամշեանից երկու որբեգր. համար . | 70 | ր. |
| Տիկ. Շուշանիկ Մարտիրոսեանից մի » » . | 40 | » |
| Պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանից՝ մի » » . | 40 | » |
| Պ. Արաֆէլեանից՝ մի որբեգրուհու համար . . . . . | 50 | » |
| Պ. Մելիք-Ղարագեօզեանից՝ և պարոն Կոլմանեանից՝ երկու որբեգրուհու համար . . . . . . . . . | 70 | » |
| Տիկ. Վ. Ծատուրեանից՝ մի կիսաթոշակ » » . | 20 | » |
| Պ. Ս. Ս. Աֆանասեանից՝ մի » » » . | 20 | ր. |

---

*) Հանգուցեալ Ղուկաս Մելիք-Ասլեանի կտակակատարներից ունենք ստանալու չորս հարիւր (400) ռուբլի:

## X.

## ԴՊՐՈՑԻՍ ՆԱԽԸՆԹԱՑ ՏԱՐՈՒԱՑ ՀԱՇԻՒԸ.

### 1910—1911 Թ.

| Մուտք. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Նախորդ տարուայ հաշուին ուսման վճար աշակերտուհիներից | — | — | 125 | — |
| Սոյն տարուայ ուսման վճար | — | — | 5,890 | — |
| Նուէրներ չքաւոր աշակերտուհիների ուսման վճարի համար. | | | | |
| Տիկ. Վ. Ծատուրեանից | 40 | — | | |
| Տիկ. Վ. Վ. Թամամշեանից | 70 | — | | |
| Տիկ. Հ. Մարտիրոսեանից | 40 | — | | |
| Պարոն Ա. Մելիք-Ազարեանից | 40 | — | | |
| Պարոն Ս. Աֆանասեանից | 20 | — | | |
| Պարոնայք Մելիք-Ղարագեօզեանից և Կօլօմանեանից | 70 | — | | |
| Պարոն Արաֆելեանից | 50 | — | | |
| Պարոն Գ. Կաֆեանից | 25 | — | | |
| 'Ի յիշատակ Զաքարեա Գրիգորեանի նուէր հանգուցեալի կնոջից | 50 | — | | |
| 'Ի յիշատակ Զաքարեա Գրիգորեանի նուէր փեսայից բժ. Արզումանեանից | 18 | — | | |
| 'Ի յիշատակ Զաքարեա Գրիգորեանի նուէր Տիկ. Վ. Բարխուդարեանից | 30 | — | 453 | — |
| Ծխական տուրք | — | — | 133 | — |
| Փոխառութիւն շինութեան յատկացրած գումարից։ Հանգուցեալ Մ. Խաչատրեանի կտակակատարներից | — | — | 2,008 | 33 |
| Փոխանցումն՝ | — | — | 8,609 | 33 |

| Մուտք. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Փոխանցումն՝ | — | — | 8,609 | 33 |
| Հանգուցեալ Մ. Խաչատրեանի կտակակատարներից 1911 թ. դեկտ. 15-ին ստացուած է՝ 5,108 ր. 33 կոպ. որից 108 ր. 33 կոպ. կազմում է 5,000 ր. $6^1/_2$ ամսուայ տոկոսը՝ մնացածից յատկացուեց շինութեան 3,100 րուբլի և այդ գումարը մուծուեց Թիֆլիսի Առևտրական Բանկ ընթացիկ հաշուով, իսկ 2,008 ր. 33 կոպ. անցաւ դըպրոցի սոյն տարուայ բիւջէի մէջ։ Եւս փոխառութիւն շինութեան գումարից . . . . . . . . . . . . | — | — | 1,435 | 87 |
| Փոխ. մուրհակով (28 մայիսի 1911 թ.). | — | — | 1,500 | — |
| Թիֆլիսի Առևտրական բանկում գրաւ դրած ինն խաղ. տոմսերից 25 յունիսի 1911 թ. ծախուեց վեց տոմս, գոյացած գումարից պարտքի հաշուում վճարուեց 2,547 ր. 25 կ., իսկ սոյն տարուայ բիւջէի մէջ մուծուեց . . . . . . . . . . . | — | — | 150 | — |
| Փոխառութիւն պ. Ս. Կիւլպէնկեանից. | — | — | 900 | — |
| Պարերի դասի համար վճար աշակերտուհիներից . . . . . . . . . | — | — | 294 | 70 |
| Ընդամէնը՝ | — | — | 12,889 | 90 |

Ծանօթութիւն. Գրաւ դրած խաղ. տոմսերից վեց հատ ծախելուց և պարտքի հաշւում 2,547 ր. 25 կ. վճարելուց յետոյ դպրոցին մնում է 3 խաղ. տոմս I. փոխառ. և դրա դիմաց 1,200 ր. պարտք։

| Ելք. | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ուսուցչական խմբին ռոճիկներ | 8,369 | 59 |
| Փայտ | 183 | — |
| Ջուր | 50 | 05 |
| Թեմական Խորհուրդին յատկացրած գումարի հաշուին | 15 | — |
| Դպրոցի ծառաներին ռոճիկներ | 455 | 50 |
| Դռնապանին | 25 | 65 |
| Դասարանական պիտոյքներ | 363 | 99 |
| Նոր նստարաններ, նստարանների և այլ կահ-կարասիքի նորոգութիւն | 107 | 10 |
| Դիւանական ծախքեր | 53 | 65 |
| Մանր և անակնկալ ծախքեր | 276 | 73 |
| Պարերի ուսուցչին | 348 | — |
| Վճարուած է պարտք | 1,500 | — |
| Գրաւ դրած տոմսերի տոկոսը և ապահովագրութիւն | 408 | 05 |
| Հոկտեմբերի 11-ին 1910 թ. վճարուած է 1,500 ր. տոկոս (մինչև 11 յունվարի 1911 թ.) | 28 | 81 |
| 1911 թ. մայիսին 1,500 րուբլու տոկոսը և մուրհակի արժէք | 43 | 86 |
| Շինութեան ապահովագրութիւն | 55 | 25 |
| Վճարուած է պ. Ս. Կիւլպէնկեանին պարտքի հաշւում. | 614 | 67 |
| Ընդամէնը՝ | 12,889 | 90 |

Եթէ մուտքի մէջ հաշուի չառնել փոխառութեան միջոցով ստացուած գումարները. 3,444 ր. 20 կ., 1,500 ր., 150 ր. և 900 ր.=5,994 ր. 20 կ., իսկ ելքի մէջ 1,500 ր. 408 ր. 05 կ., 28 ր. 81 կ., 43 ր. 86 կ. և 614 ր. 67 կ.=2,595 ր. 39 կ., սոյն ուսումնական տարուայ ընթացքում գոյացած բացը պէտք է հաշուել 3,398 ր. 81 կ.։

## XI.

## ԴՊՐՈՑԻ ՆԵՐԿԱՅ ՏԱՐՈՒԱՅ ՀԱՇՈՒԻՑ.

### 1911—1912 թ.

1911 թ. Սեպտեմբերի 1-ից մինչև մէկն Մայիսի 1912 թ. (ութ ամիս).

| Մուտք. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Ուսման վճար աշակերտուհիներից . . | — | — | 7,243 | 50 |
| Նուէր պ. Վ. Վ. Թամամշեանից . . . | 70 | — | | |
| » պ. Վահանեանից . . . . . . | 50 | — | | |
| » տ. Վ. Ծատուրեանից . . . . | 20 | — | 140 | — |
| Ա. Ի. Մանթաշեանի ժառանգներից . | — | — | 8,000 | — |
| Միրզաջան Խաչատրեանի կտակակատարներից . . . . . . . . . . | — | — | 5,000 | — |
| Փոխ. (մուրհակով Առևտր. բանկից) . | — | — | 2,000 | — |
| Պարերի հմր վճար աշակերտուհիներից. | — | — | 150 | — |
| Ընդամէնը՝ | — | — | 22,533 | 50 |

| Ելք. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Ուսուցչական խմբին ռոճիկներ . . . | 7,303 | 77 | | |
| Մանկավարժական ժող. քարտուղարին. | 35 | — | | |
| Գործավարին . . . . . . . . . . . . . . | 90 | — | | |
| Փայտի . . . . . . . . . . . . . . . . | 250 | 90 | | |
| Ջրի . . . . . . . . . . . . . . . . . | 76 | 56 | | |
| Դռնապանին . . . . . . . . . . . . . | 10 | 50 | | |
| Ծառաներին . . . . . . . . . . . . . | 335 | 20 | | |
| Դասարանական պիտոյքներ . . . . . | 164 | 11 | | |
| Փոխանցումն՝ | 8,266 | 04 | | |

| Ելք. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|
| Փոխանցումն՝ | 8,266 | 04 | | |
| Նոր նստարաններ և այլ կահ-կարասիք, նորոգութիւն կահ-կարասիքի . . | 467 | 60 | | |
| Մանր և անակնկալ ծախքեր . . . . | 256 | 41 | | |
| Դիւանական ծախքեր . . . . . . . | 17 | 20 | | |
| Պարերի ուսուցչին . . . . . . . . | 100 | — | | |
| Շինութեան ապահովագրութիւն . . . | 55 | 25 | | |
| Դպրոցի շինութեան նորոգութեան և յարմարեցման . . . . . . . . | 242 | 10 | | |
| % և մուրհ. արժէք (2,000 ր. փոխառ.). | 45 | 06 | | |
| Վճարուած է պարտք Առևտր. Բանկին. | 1,500 | — | | |
| Վճարուած է պարտք գրաւ դրած խաղ. ասմսերի համար . . . . . . . | 1,163 | 20 | | |
| Վճար. է պարտք պ. Ս. Կիւլպէնկեանին. | 285 | 33 | | |
| Վճար. է պարտք Առևտրական Բանկին. | 2,000 | — | | |
| » » շինութեան հաշուին . . . . | 84 | 68 | 14,482 | 87 |
| Տուած է ընթաց. հաշ. Առևտր. Բանկ. | 4,015 | 32 | | |
| Տուած է ի պահեստ մի տարով (Թիֆլ. 2-րդ Փոխ. Վարկ. Ընկերութեան. | 3,500 | — | | |
| Հոգաբարձութեան գանձապահի մօտ . | 535 | 31 | 8,050 | 63 |
| Ընդամէնը՝ | — | — | 22,533 | 50 |

Հոգաբարձութեան անդամներ. {
Ռ. Յովհաննիսեան.
Ն. Տէր-Ղեւոնդեան.
Տ. Թադէոսեան.
Ս. Կիւլպէնկեան.
Բ. Գալստեան.

Ծանութութիւն. 1163 ր. 20 կ. պարտքի հաշւում վճարելուց յետոյ, դպրոցն ունի ներկայումս 3 խաղարկու ասմս I փոխառ.: Տոմսերը գրաւ են դրուած Թիֆլիսի Առևտրական Բանկում, պարտքն է 100 րուբլի:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ.

### I.

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

*Մանկավարժական խորհուրդը իւրաքանչիւր ուսումնական տարուայ ընթացքում ունեցել է իր հերթական նիստերը.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *1906—07* | *ուսումն.* | *տար.* | *15* | *անգամ.* |
| *1907—08* | » | » | *32* | » |
| *1908—09* | » | » | *30* | » |
| *1909—10* | » | » | *31* | » |
| *1910—11* | » | » | *30* | » |
| *1911—12* | » | » | *34.* | » |

*Օրակարգի նիւթ են եղել հետևեալ խնդիրները՝*

*1. Ծրագիր. Գայեանեան օրիորդաց դպրոցը երկար տարիներ փակ մնալուց յետոյ՝ վերջապէս վերաբացւում է 1906 թ. օգոստոսի 9-ին։ Թէև 1885 թ. մարտին առաջին անգամ փակւելուց յետոյ վերաբացուել էր 1887 թուին, կրկին անգամ փակուել 1896 թ. և կրկին անգամ վերաբացուել 1898 թուին, սակայն այս երկու շրջանում էլ նա գոյութիւն էր ունեցել որպէս տարրական դպրոց. 1887—1896 թ. որպէս երկդասեան դպրոց՝ 1884 թ. կանոնադրութեան համաձայն կրճատուած դասընթացով, իսկ 1898 — 1905 թ. հայկական միւս եկեղեցական-ծխական դպրոցների կից՝ ենթարկուելով լուսաւորութեան նախարարութեան՝ ունեցել էր սովորաբար չորսամեայ դասընթաց, երբեմնակի նաև վեցամեայ։ Խօսք չը կայ այս երկու շրջանում էլ՝ թէ իր ծրագրով և թէ ուղղութիւնով հեռու էր կանգնած առաջին փայլուն շրջանից, երբ Գայեանեան դպրոցը հայ իրականութեան մէջ՝ որպէս օրիորդաց միջնակարգ դպրոց՝ միակն էր։*

*Վերջին՝ 1906 թ. վերաբացման օրից, դպրոցի հոգաբարձական և մանկավարժական խորհուրդները ամեն կերպ աշխատում են դպրոցը բարձրացնել իր նախկին դրութեան։ Բնա-*

կանօրէն ամենաէական խնդիրներից մէկն է լինում դպրոցի ծրագրի և ուղղութեան խնդիրը։ Ասպարիզում չկային մշակուած ծրագիրներ՝ միջնակարգ դպրոցների համար. նոյնիսկ Թեմական դպրոցները զուրկ էին դրանից և նրանցից իւրաքանչիւրն զբաղուած էր նոր ծրագիր մշակելու խնդրով։ Ինչ վերաբերում է տարրական դպրոցներին, ուշադրութեան արժանի էր միմիայն «Նախագիծ-ծրագիրը», որ մշակած էր 1905 թ. ուսուցչական համագումարի կողմից ընտրուած մասնաժողովը։

1906—07 ուսումնական տարուայ սկզբի ժողովներին մանկավարժական խորհուրդը որոշում է առաջնորդուել «Նախագիծ-ծրագրով»՝ սակայն ընդհանուր գծերով. «Նիւթերի մանրամասն ընտրութիւնը, բաժանումը, դասաւորումը, սիստեմն ու մեթոդը վերապահելով ուսուցչական խորհրդին.—նախանձախնդիր լինել, որ ամեն մի դպրոց պահէ իր անհատական գոյնը, չդառնայ շաբլօն։ Նոյնը շեշտւում է և ամեն մի ուսուցչի համար։ Ամեն մի ուսուցիչ մեր դպրոցի ընտրած ծրագրի սահմաններում՝ ազատ է իր ձևով, իր ուղղութիւնով, իր դասատուութիւնով նիւթն աւանդելու, այլ և իր ընտրանքով»։ (Արձանագրութիւն 1906—07 ուսումն. տարուայ II նիստի)։

1909—10 ուսումն. տարին բացւում է չորրորդ հիմնական դասարան (ուսման VII տարի), որի դասընթացը չի մտնում «Նախագիծ-ծրագրի» մէջ, հետևապէս ուսուցչական խմբին մնում էր կազմել ծրագիր այս դասարանի համար՝ իր ամբողջութեամբ։ Մանկավարժական խորհուրդը որոշում է՝ «աչքի առաջ ունենալով Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի, Ներսիսեան Թեմական դպրոցի և պետական միջնակարգ դըպրոցների ծրագրերը, պատրաստել համապատասխան ծրագրեր մեր դպրոցի համար (որի բարձր դասարանը լինելու էր VI-ը), սակայն ուսման առաջին չորս տարիների համար այնուամենայնիւ գլխաւորապէս հիմք ընդունել Նախագիծ-ծրագիրը»։

Եւ այսպէս մինչև այս տարի իւրաքանչիւր դասատու տարուայ սկզբից կազմել է ընդհանուր գծերով ծրագիր իր աւանդելի առարկայի վերաբերեալ և մանկավարժական խորհրդի կողմից հաւանութիւն գտնելուց յետոյ միմիայն, գործադրել է այն։

Իւրաքանչիւր ուսումնական տարուայ մանրամասն ծրագիրը մտած է ծրագրներին յատկացրած ընդհանուր մատեանի մէջ։

Մանկավարժական խորհուրդը, բացի մանաւորապէս մեր դպրոցին վերաբերեալ ծրագրային խնդիրներից, 1910—11 ուս. տարուայ մի շարք ժողովների խորհրդածութեան նիւթ է դարձրած հոգևոր իշխանութեան կողմից չորսամեայ և վեցամեայ դասընթաց ունեցող եկեղեցական-ծխական դպրոցներին առաջարկուած ծրագիրը,—թէ որչափ այդ ծրագիրը նպատակայարմար է, կամ թէ ինչ թերութիւններ ունի։

2. Ուսուցչական կազմի անդամների յարաբերութեան խնդիրը. Որպէսզի մանկավարժական խմբի անդամները հնարաւորութիւն ունենան մօտից ծանօթանալու մի կողմից՝ ընկեր ուսուցիչ-ուսուցչուհիների դասաւանդման և միւս կողմից՝ իւրաքանչիւր դասարանի առաջադիմութեան հետ (նաև այլ առարկաներից), որով միմիայն հնարաւոր կը լինի աւելի հեշտութեամբ կապ ստեղծել դասաւանդուող առարկաների մէջ, աչքի առաջ ունենալով իւրաքանչիւր դասարանի առաջադիմութեան աստիճանն ընդհանրապէս բոլոր առարկաներից—մանկավարժական խորհուրդը դպրոցի վերաբացման տարուց սկսած անհրաժեշտ է համարել միմիայն դասերի այցելութիւնը։

Մանկավարժական խորհուրդն աննպատակայարմար գտնելով միևնոյն դպրոցի դասատուների համար կազմակերպուող փորձնական դասերը,—որոնք իրանց էութեամբ լինելով անբնական թէ ուսուցչի և թէ աշակերտուհիների վերաբերմամբ, իսկական պատկեր չեն տալիս թէ ուսուցչի մանկավարժական հմտութեան և թէ աշակերտուհիների առաջադիմութեան,—ընկերների մանկավարժական գործունէութեան հետ ծանօթանալու համար, աւելի նպատակայարմար է գտած այս կատարել բնական պայմաններում՝ սովորական դասերի ժամանակ։ Ամեն մի ուսուցիչ-ուսուցչուհի պարտաւոր է ներկայ եղած լինել բոլոր ընկերների դասերին, իսկ այն դասարանում, ուր ինքը դաս ունի, անխտիր բոլոր առարկաներից։

Ցանկալի է համարւում, որ ընկերները երբեմնակի միքանիսով այցելեն դասերի, (նամանաւանդ նոյն կամ աւելի մօտ կապ ունեցող առարկաների դասատուները), որովհետև այսպիսի դէպքում դասի քննադատութիւնը կարող է աւելի բազմակողմանի լինել, շնորհիւ կարծիքների փոխանակութեան աւելի լայն շրջանում։

3. *Դասարանական վերստուգումներ.* Բացի սովորական դասերին յաճախելուց, մանկավարժական խորհուրդը կարևոր է գտած տարին առնուազն երկու անգամ (կիսամեայ և տարեկան) կատարել դասարանական վերստուգութիւններ։ Այս վերստուգութիւնների նպատակն է եղել, հնարին չափով, պատկերացնել դասարանի ընդհանուր առաջադիմութիւնը (առանց ծանրանալու իւրաքանչիւր աշակերտուհու վրայ), այսինքն թէ ինչ չափով է աջողուել դասատուներին՝ առարկան որոշուած ծրագրի սահմաններում անցնել, և թէ ինչ ուղղութեամբ է տարուած դասաւանդումն։

Վերստուգութիւնները կատարելուց յետոյ մանկավարժական խորհուրդը մի շարք ժողովներ է ունեցել, ուր քննադատութեան են դրուել անխտիր իւրաքանչիւր դասարանում կատարուած տարեկան և կիսամեայ վերստուգութիւնները։

4. *Երկամսեակներ և եռամսեակներ.* Իւրաքանչիւր ուսումն. տարուայ ընթացքում (առաջին հինգ տարիներում) իւրաքանչիւր երկամսեակից, (իսկ 1911—12 ուս. տարում) եռամսեակից յետոյ տեղի են ունեցել ընհանուր մանկավարժական ժողովներ, ուր որոշուած են նախ իւրաքանչիւր աշակերտուհու առաջադիմութիւնը ամեն մի առարկայից և ապա իւրաքանչիւր դասարանի առաջադիմութիւնը։

Առաջադիմութիւնը որոշող սովորական թւանշանների գործածութիւնը մերժուած է։ Երկամսեակների կամ եռամսեակների և տարեկան առաջադիմութիւնը որոշուած են՝ *թոյլ, միջակ* և *լաւ* խօսքերով։

Երկամսեակներից և եռամսեակներից յետոյ միմիայն թոյլ աշակերտուհիների ծնողներին է յայտնուած եղել աշակերտուհու առաջադիմութեան մասին։ Այսպիսի դէպքում ծնողները հրաւիրուել են դպրոց՝ խորհրդակցութեան։ Խիստ թուլութեան և ծուլութեան դէպքերում ծնողները հրաւիրուել են աւելի յաճախ։

Ուսումնական տարին վերջանալուց յետոյ ծնողներին տեղեկութիւն է տրւում անխտիր իւրաքանչիւր աշակերտուհու տարեկան առաջադիմութեան վերաբերեալ։

Դպրոցի դռները միշտ բաց են եղել ոչ միմիայն ծնողների, այլ և դպրոցով հետաքրքրուող հասարակութեան իւրաքանչիւր

անդամի առաջ։ Շատ յաճախ այցելուներ են եղած այս կամ այն ուսուցչուհու, ուսուցչի դասերին։

5. Դասաբաշխում. Իւրաքանչիւր ուսումնական տարուայ վերջը կազմուած է առաջիկայ տարուայ համար դասաբաշխման մօտաւոր ցանկը, իսկ տարուայ սկզբում, սովորաբար օգոստոսի վերջերին վերջնական ցանկը։ Դասաբաշխման ցանկը ներկայացրուած է հոգաբարձութեան 'ի հաւանութիւն և 'ի հաստատութիւն։

6. Ընտրութիւններ. Ուսուցչի-ուսուցչուհու, վերակացուհի-դաստիարակչուհիների, որպէս և տեսչի ընտրութիւնը կատարուած է մանկավարժական և հոգաբարձական խորհուրդների ընդհանուր համաձայնութիւնով։ Ընտրուած են համարուել միմիայն նրանք, որոնք ընդհանուր թեկնածուների ցանկի մէջ են ընկել։ Սովորաբար մանկավարժական խորհուրդը խնդրատուներից ընտրած է երկու կամ աւելի թեկնածուներ և ներկայացրել հոգաբարձութեան, որին և վերապահուել է վերջնական ընտրութիւնը։

Բացառիկ դէպքում, երբ հնարաւոր չի եղել գումարել մանկավարժական ժողովներ (օր. արձակուրդի շրջանում) ընտրութիւնը կատարուել է հոգաբարձութեան և տեսչի միջոցով։

7. Բացակայ դասատուներին փոխարինելու խնդիր. Տարուայ ընթացքում հիւանդութեան կամ այլ պատճառներով բացակայող դասատուները պատճառ են դառնում դպրոցի նորմալ ընթացքի խանգարման։ Մանկավարժական խորհուրդը որոշած է հնարին չափով այդ վնասը սահմանափակել։

Եթէ դասատուն բացակայելու է ոչ աւելի մի կամ մի քանի օր, նրա դասերը փոխարինւում են այլ դասերով, կամ ընթերցանութիւնով, բայց եթէ բացակայութիւնը կարող է տևել շաբաթ կամ աւելի, այն ժամանակ բացակայողի առարկան պէտք է անպատճառ յանձնուի այլ անձնաւորութեան (ուսուցչական խմբի անդամներից կամ թէ դրսից հրաւիրուած), որը սակայն պէտք է անցնի առարկան բացակայողի տուած ծրագրի և ուղղութեան համաձայն։

Ինչ վերաբերում է երկար ժամանակով օգնութեան հրա-

ւիրուած դասատուի վարձատրութեան, թէև մանկավարժական խորհուրդը գտած է, որ այդպիսի դէպքում երկուսն էլ պէտք է վարձատրուին (եթէ դասատուի բացակայութիւնը յիմնուում է յարգելի պատճառների վրայ), սակայն աչքի առաջ ունենալով դպրոցիս սուղ պայմանները, խմբի անդամները միշտ մերժում են վարձատրութիւնը յօգուտ բացակայողի։

8. Դասագրքերի ընտրութիւն. Դասագրքերի ընտրութիւնը կախուած է դասատու ուսուցչից, սակայն այդ պէտք է վաւերացուի ուսուցչական խմբի կողմից։ Սովորաբար միենոյն առարկայի դասատուները դասագրքերի խնդիրը մասնաւոր քննադատութեան նիւթ են դարձնում և ապա իրանց եզրակացութիւնները դնում մանկավարժական խորհրդի առաջ։

9. Մանկավարժական ժողովների խորհրդակցութեան նիւթ են ծառայել բացի այս կամ այն առարկայի դասաւանդման եղանակներից, նաև գրաւոր աշխատութիւնների ուղղման խնդիրը և ուղղագրութեան հարցը, դպրոցական գեղագրութեան, որպէս առանձին առարկայի դասաւանդման աննպատակայարմարութիւնը, խմբական նկարչութեան ու ձեռարուեստի խնդիրը և այլն։

10. Պատիժների աննպատակայարմարութիւնը.

11. Դպրոցի կառավարութեան, կարգապահութեան և ընդհանրապէս դպրոցական դիսցիպլինային վերաբերեալ խնդիրները ամեն տարի էլ մանկավարժական ժողովների օրակարգի մէջ են մտած, խօսք չը կայ առաջին տարիներում աւելի յաճախակի։

1911—12 ուսումնական տարուայ մանկավարժական ժողովների և առանձնապէս ընտրուած մասնաժողովների խորհրդածութեան է տրուած աշակերտութեան ինքնավարութեան խնդիրը։ Մանկավարժական խորհուրդը խոր զգալով, որ դպրոցի թէ ընդհանուր կարգապահութիւնը և թէ կրթական-դաստիարակչական գործը զգալի կերպով կարող է բարձրանալ, եթէ ուսուցչական խումբը դիմէ աշակերտութեան աջակցութեան, — մշակած է առանձին նախագիծ-կանոնագրութիւն, որ և գործադրութեան մէջ է մտած դեկտեմբերից։

12. Դպրոցական կանոնաւոր խաղերի և մարմնամարզութեան անհրաժեշտութիւնը։

13. Աշակերտուհիների դպրոցից դուրս կազմակերպուող համերգներին, ներկայացումներին, ցերեկոյթ-երեկոյթներին խմբովին, թէ առանձնակի մասնակցութեան անցանկալի լինելը. (Թոյլատրել միմիայն այն դէպքերում, երբ յատուկ աշակերտական բնոյթ կը կրեն, այն ևս տարեկան ոչ աւելի, քան երկու անգամ)։

14. Դպրոցական ցերեկոյթ-երեկոյթների խնդիրը. Մանկավարժական խորհուրդը գտած է, որ դպրոցական ցերեկոյթ-երեկոյթները ոչ թէ պատահական-տօնական բնոյթ պէտք է կրեն, այլ պէտք է տեղի ունենան պարբերաբար՝ տարբեր բովանդակութեամբ։ Սրանք կազմակերպւում են աշակերտութեան համար, հետևապէս միշտ էլ պէտք է կրեն աշակերտական-ընտանեկան բնոյթ, եթէ անգամ աշակերտուհիների ծնողները կամ դպրոցին մօտիկ այլ անձնաւորութիւններ հրաւիրուած լինեն։

Աշակերտութեան գեղարուեստական ճաշակը աւելի լայն զարգացնելու, ազնուացնելու համար յարմար է գտնուած ամեն աջողակի առիթից օգտուել ձրի կամ արժան գներով թատրոն տանել (դրամատիկ և օպերային ներկայացումների։ Այս գործում շատ մեծ օգնութիւն է հասցրած Հայոց Դրամ. Ընկերութիւնը, որը երկու տարի շարունակ ուղարկած է մեր դպրոցին ձրի տոմսեր)։

15. Զբօսանքներ և էքսկուրսիաներ. Մանկավարժական խորհուրդը գտած է աշակերտական զբօսանքներ և էքսկուրսիաների բարձր նշանակութիւնը դպրոցական կեանքում, սակայն դպրոցի սուղ միջոցները և աշակերտութեան մեծամասնութեան նիւթական աննախանձելի դրութիւնը աչքի առաջ ունենալով, անկարող է եղած լայն չափով օգտուել՝ էքսկուրսիաներ կատարել նաև քաղաքից ու նրա շրջակայքից դուրս։

16. Ծնողական ժողովներ. Մանկավարժական խորհուրդը գտած է ծնողական ժողովների կարևորութիւնը՝ նախ ընդհա-

նրապէս կապ ստեղծելու դպրոցի և ծնողների միջև և երկրորդ՝ աչքի առաջ ունենալով մեր աշակերտութեան զգալի մեծամասնութեան ծնողների կրթական ցածր աստիճանը, որոշ հրահանգներ և խորհուրդներ նրանց տալու, աշակերտութեան դաստիարակութեան և կրթական թերին հնարին չափով լրացնելու և խիստ չքաւորների տնտեսական դրութիւնը փոքր ի շատէ բարելաւելուն նպաստելու համար։

17. Գրադարան-ընթերցարանի խնդիրը. Մանկավարժական խորհուրդը թէև անկարող է եղել բաւարարութիւն տալ աշակերտութեան ընթերցանութեան կարիքներին դպրոցի գրադարանի միջոցով, սակայն միջոցներ է ձեռք առած սկզբում «Էժանագին» իսկ այժմ «Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան» գրադարանից օգտուելու համար։

Իւրաքանչիւր դասարանին յայտնուած է ցանկը՝ նրանց հասակին և կրթական պատրաստութեան մատչելի գրքերի։— Միաժամանակ առանձին մասնաժողովների միջոցով մշակուած է ցանկ կարևորագոյն գրքերի, դպրոցիս խիստ աղքատ գրադարանի համար ձեռք բերելու։

Խոր զգալով դասարանական պարտադիր ընթերցանութեան կարևորութիւնը, այնուամենայնիւ իրանից անկախ պատճառներով անկարող է եղած բոլոր դասարաններում էլ այդ իրագործել։

18. Իւրաքանչիւր ուսումնական տարուայ սկզբում՝, կիսամեակից յետոյ և երբեմն վերջում՝ տեղի են ունեցած ժողովներ նոր ընդունելութիւնների, ուսումնական տարուայ սկզբում նաև վերաքննութիւնների վերաբերեալ։

29. Հոգաբարձութեան առաջարկով քննութեան են առնուած աշակերտուհիների տնտեսական դրութիւնը և կազմուած է ցանկ ձրիավարձների և կիսավճարների։

20. Սկսած 1907—08 ուսումնական տարուց մանկավարժական խորհրդի առանձնակի հոգացողութեան առարկայ են դարձել դպրոցի տիպը և մանաւորապէս վերջին դասարանը։ Գայիանեան դպրոցի խիստ սուղ պայմանները և Մողնու եկեղեցու ծխականների ստուար մեծամասնութեան ծայրահեղ անտարբերութիւնը, առիթ է տուել ծխականներից շատերին և նոյնիսկ հոգաբարձութեան՝ դպրոցը սոսկ տարրականի վերածելու խնդիրը առաջ բերելու։

Մանկավարժական խորհուրդը անկարող էր անտարբեր լինել այս դէպքում և շատ անգամ իր նիստերը այս խնդրին էր նուիրած։

21. Մանկավարժական ժողովների նիւթ են կազմել Ներսիսեան դպրոցի ուսուցիչ պ. Միսակ Ասլեանի ուսուցչական գործունէութեան քսան և հինգ ամեակի, Շիրվանզադէի գրական-գործունէութեան երեսնամեակի և Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան երեսնամեակի առթիւ կազմակերպւող յոբելեաններին մասնակցելու խնդիրը։

Բացի մանկավարժական ժողովներից, ուր քննութեան են առնուած ուրիշ շատ դպրոցական հերթական հարցեր, տեղի են ունեցած և առանձին դասարանական ժողովներ, որին մասնակցել են նոյն դասարանի դասատուները, դաստիարակ-դաստիարակչուհիները և տեսուչը. այս ժողովների նպատակն է եղել առանձնակի ուշադրութեան առնել աշակերտուհիների առաջադիմութիւնը, բնաւորութիւնը, տնտեսական և այլ պայմանները. մի խօսքով այն դրական և բացասական պայմաններն ու երեւոյթները, որոնք կարող են ազդել աշակերտուհիների կրթական-դաստիարակչական դրութեան վրայ։

Սկզբի տարիներում գումարուել են և մի շարք հոգաբարձական-ուսուցչական խառն ժողովներ, ուր գլխաւորապէս պարզուել են հոգաբարձական և ուսուցչական մարմինների յարաբերութեան, ընդհանուր կառավարչական խնդիրները։

## II.

## ԳՐԱԴԱՐԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐ.

Ամեն մի նորմալ դպրոցի կեանքում մեծ դեր են խաղում նրա գրադարանը և դպրոցական-ուսումնական պիտոյքները։

Գայեանեան դպրոցը, որ մի ժամանակ ունէր հարուստ գրադարան և ոչ պակաս հարուստ ֆիզիքական կաբինէտ և ընդհանրապէս դպրոցական պիտոյքներ, վերաբացման օրը վերին աստիճանի աննախանձելի պատկեր էր ներկայացնում։ Գրադարա-

նում մնացել էին մեծ մասով այնպիսի գրքեր, որոնք կամ բոլորովին անպէտք էին իրանց բովանդակութեամբ և կամ թէ այնքան փչացած, որ անկարելի էր նրանցից օգտուել։ Չը կար և ոչ մի քիմիայի և ֆիզիկայի վերաբերեալ գործիք և ոչ մի քարտէզ (եթէ չը հաշուեմ մի համատարած քարտէզը)։

Դպրոցի վերին ատեանի սուղ պայմանները թոյլ չէին տալիս արագութեամբ լրացնել այդ պակասները. որոշուում է աշխատել իւրաքանչիւր ուսումնական տարուայ ընթացքում յաջորդաբար ձեռք բերել ամենակարևոր գրքերը, քարտէզները, նկարները, ֆիզիկայի և քիմիայի վերաբերեալ գործիքները։

Ուսուցչութեան մնում էր յաճախ օգտուել օտար դպրոցներից՝ դասերին կարևոր իրերը, գործիքները, նկարներն ու քարտէզները խնդրելով։ Ոչ պակաս օգնութեան էին հասնում նաև Կովկասեան և Մանկավարժական թանգարանները։

Ինչ վերաբերում է ընթերցանութեան, դպրոցի աշակերտութիւնը ստիպուած է բաւականանալ դպրոցից դուրս գըտնուող գրադարան-ընթերցարաններով։

Առաջին տարիները օգտուել են լայն չափով «Էժանագին», իսկ վերջին երկու տարիների ընթացքում «Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան գրադարանից»։

## III.

## ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԹԻՒԸ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ.

| Ուսումնական տարի. | Պատրաստական դաս. | | | Հիմնական դասարաններ. | | | | | | Բոլոր դասարաններում միասին. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա. Ուսմ. I s. | Բ. Ուսմ. II s. | Գ. Ուսմ. III s. | I. Ուսմ. IV s. | II. Ուսմ. V s. | III. Ուսմ. VI s. | IV. Ուսմ. VII s. | V Ուսմ. VIII s. | VI. Ուսմ. XI s. | |
| $190^{6}/_{7}$ | — | 39[1]) | 45 | 46<br>40 գ. | — | — | — | — | — | 170 |
| $190^{7}/_{8}$ | 25[2]) | — | 49 | 42 | 45<br>32 գ. | — | — | — | — | 193 |
| $190^{8}/_{9}$ | — | 31 | — | 47 | 49 | 29<br>21 գ. | — | — | — | 177 |
| $19^{09}/_{10}$ | 22 | — | 35 | 35 | 42 | 48 | 36 | — | — | 218 |
| $19^{10}/_{11}$ | 28 | 39 | — | 48 | 44 | 48 | 35 | 28 | — | 270 |
| $19^{11}/_{12}$ | 35 | 36 | 39 | 23 | 45 | 51 | 35 | 32 | 23 | 319 |

*ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ՝*

*[1]) Գայեանեան Օր. դպրոցի հոգաբարձութիւնը՝ 1906 թ. ամառը յայտարարում է դպրոցը վերաբացուած և օգոստոսին նշանակում է ընդունելութիւն աշակերտուհիների։ Որոշում է բանալ միմիայն չորս դասարան։*

*[2]) Թէև հէնց առաջին տարուանից դպրոցի Վարչութիւնը որոշած է լինում՝ աշխատել բանալ հիմնական դասարաններ (ուսմ. IV տարուանից սկսած), աչքի առաջ ունենալով, որ Թիֆլիսում ծխական տարրական դպրոցների թիւն առանց այն էլ մեծ է, սակայն* **զիջելով** *շատ ծնողների խնդրքին, երկրորդ $19^{07}/_{08}$ ուս. տ. Բաց է անում նաև* **առաջին պատր. դասարան**։

*[3]) $19^{08}/_{09}$, որպէս և յետագայ ուսումնական տարիների փորձերը պարզապէս ցոյց են տալիս, որ անհնարին է խուսափել պատրաստական դասարաններ բանալուց. որի պատճառն է մի կողմից այն հանգամանքը, որ շատ ծնողներ տրամադիր են իրանց աղջիկներին հայկական դպրոց տալ հէնց առաջին տարիների ընթացքում, յուսալով, որ յետոյ կարող են տեղափոխել պետական դպրոցները, և միւս կողմից՝ այն, որ անհնարին է լինում մեր ծխական տարրական դպրոցների շրջանաւարտներից* **վճարող** *բաւականաչափ աշակերտուհիներ ընդունել առաջին և աւելի բարձր հիմնական դասարանները։—Հէնց այս հանգամանքն է պատճառ, որ ներկայ $19^{11}/_{12}$ ուս. տ. առաջին հիմ. դասարանի աշակերտուհիների թիւը (23 հոգի) նորմայից շատ ցածր է (անցեալ տարի պակասում էր երրորդ պատր. դասարան)։*

*[4]) $19^{09}/_{10}$ ուս. տ. դպրոցի Վարչութիւնը որոշում է բանալ առաջին պատրաստական դասարան և այնուհետև յաջորդաբար լրացնել միւս դասարանները։ $19^{11}/_{12}$ ուս. տ. յաջողւում է բանալ և վեցերորդ հիմնական դասարան, և այդպիսով դպրոցը ստանում է լրիւ միջնակարգ դպրոցի ծաւալը։*

IV.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

## ԱՇԱԿԵՐՏՈՒՀ. ԸՆՏԱՆԻՔԻ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.

### 1911—1912 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՎԵՐՋՈՒՄ.

| Դասարաններ. | | Քանիսը ունեն. | | | | Ռուսահպ. | | Օտարահպատակ. | Ի՞նչ պարապմունք ունեն ծնողները. | | | | | | Ի՞նչ կրթութիւն ունեն. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հայր եւ Մայր. | Միայն. Հայր. | Միայն. Մայր. | Որբ են. | Թիֆլիսեցի. | Ոչ թիֆլիսեցի. | | Հոգեւորակ. | Երկրագործ. | Արհեստաւոր. | Վաճառակ. | Ծառայող. | Անն. պարապ. | Միջնակարգ. | Բարձրագոյն. | Տարրական. | Անգրագէտ. |
| Պատրաստական. | Ա. | 27 | 1 | 3 | 1 | 8 | 24 | — | — | — | 8 | 11 | 7 | 2 | 7 | 2 | 13 | 10 |
| | Բ. | 33 | — | 4 | 1 | 13 | 25 | — | 2 | — | 8 | 11 | 10 | 2 | 3 | 3 | 28 | 3 |
| | Գ. | 27 | — | 10 | 1 | 20 | 15 | 3 | 5 | — | 5 | 15 | 6 | 2 | 6 | 2 | 23 | 6 |
| Հիմնական. | I. | 19 | 2 | 2 | — | 10 | 12 | 1 | — | — | 3 | 12 | 6 | 2 | — | 1 | 17 | 5 |
| | II. | 36 | 1 | 5 | 1 | 14 | 29 | — | 2 | 1 | 6 | 18 | 13 | 2 | 5 | 2 | 28 | 7 |
| | III. | 35 | 2 | 9 | 5 | 14 | 35 | 2 | — | — | 14 | 9 | 19 | 2 | 5 | 2 | 30 | 9 |
| | IV. | 18 | 1 | 9 | 5 | 8 | 24 | 1 | — | 2 | 9 | 4 | 7 | — | 4 | 1 | 17 | 8 |
| | V. | 18 | 1 | 11 | 1 | 12 | 18 | 1 | 2 | — | 9 | 6 | 5 | 1 | 1 | — | 20 | 9 |
| | VI. | 15 | 1 | 6 | 1 | 5 | 18 | — | 1 | — | 5 | 7 | 6 | 4 | 1 | — | 21 | 1 |

V.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀ. ՈՒՍՄ. ՎՃԱՐԻ, ՀԱՍԱԿԻ ԵՒ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.

**1911—1912 ՈՒՍՄ. ՏԱՐ. ՎԵՐՋՈՒՄ.**

| Դասարաններ. | Աշակերտուհիների թիւը. | | | | Հասակը. | | Առաջադիմութիւն. | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Թոշակաւորներ. | | | Տարիքը. | | Քանի՞ հոգի եւ ի՞նչ տոկոս են | | | | | | | |
| | Չքաւորներ. | 40 ռուբլի. | 20 ռուբլի. | Բոլորը. | Ամենափոքրը. | Ամենամեծը. | Դաս. փոխել. Հոգի. | Դաս. փոխել. % | Դաս. մնացել. Հոգի. | Դաս. մնացել. % | Վերաքննելի. Հոգի. | Վերաքննելի. % | Աւարտում են. Հոգի. | Աւարտում են. % |
| **Պատրաստական.** | | | | | | | | | | | | | | |
| *Առաջին.* | 1 | 30 | 1 | 32 | 7 | 10 | 28 | 88% | 1 | 3% | 3 | 9% | | |
| *Երկրորդ.* | 4 | 30 | 4 | 38 | 8 | 11 | 33 | 86,8 | 1 | 2,6% | 4 | 10,6 | | |
| *Երրորդ.* | 10 | 24 | 4 | 38 | 9 | 13 | 26 | 68% | 3 | 8% | 9 | 24% | | |
| **Հիմնական.** | | | | | | | | | | | | | | |
| *Առաջին.* | 2 | 19 | 2 | 23 | 11 | 17 | 11 | 48% | 3 | 13% | 9 | 39% | | |
| *Երկրորդ.* | 8 | 29 | 6 | 43 | 12 | 17 | 26 | 60,4% | 2 | 4,6% | 15 | 35% | | |
| *Երրորդ.* | 9 | 34 | 8 | 51 | 12 | 17 | 24 | 47% | 8 | 15,8% | 19 | 37,2 | | |
| *Չորրորդ.* | 15 | 15 | 3 | 33 | 13 | 19 | 21 | 64% | 6 | 18% | 6 | 18% | | |
| *Հինգերորդ.* | 12 | 13 | 6 | 31 | 16 | 19 | 17 | 55% | 1 | 3% | 13 | 42% | | |
| *Վեցերորդ.* | 2 | 14 | 7 | 23 | 15 | 19 | | | 3 | 13% | 2 | 9% | 18 | 78% |
| | 63 | 209 | 41 | 312 | | | 186 | 59,6% | 28 | 9% | 80 | 25,4% | 18[1]) | 6% |

[1]) *ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Առանց վերաքննութեան փոխադրուողների և աւարտողների թիւը միասին կազմում է 204 հոգի—65%. իսկ եթէ վերաքննութիւն ունեցողների առնուազն կէսը հաշուենք, որ կը տեղափոխուի, այն ժամանակ դպրոցում կարելի է հաշուել տեղափոխուող 244 հոգի—78%.*

VI.

## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ Ի՞ՆՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՆ ԱՒԱՆԴՒՈՒՄ, ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔԱՆԻ՞ ԴԱՍՈՎ.

| Դասարաններ. | | Կրօն. | Եկեղեց. երգ. | Լեզուներ. | | | Մաթեմատիկա. | | | Բնագիտութիւն | | Առողջապահութ. | Աշխարհագրութիւն. | | | Պատմութիւն. | | | Գծագրութիւն. | Նկարչութիւն. | Ձեռագործ. | Խմբ. մարմնամարզ. | Խմբ. երգեցող. | Դասերի թիւը մի-ժամ. դասատուութ. | Ծանօթութիւններ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հայոց. | Ռուսաց. | Ֆրանսերէն. | Թուաբանութ. | Աջեբրա. | Երկրաչափ. | Իրաց ծանօթ. և բնակ. պատմ. | Ֆիզիկա. | | Ընդհանուր. | Ռուսաստանի. | Հայաստանի (և Կովկասի). | Ընդհանուր. | Հայոց. | Ռուսաց. | | | | | | | |
| Պատրաստական. | Ա. | 2 | | 6 | — | — | 6 | — | — | 2 | — | — | — | — | — | — | — | — | 2 | 2 | 2 | — | — | 22 | |
| | Բ. | 2 | | 7[1]) | 6 | — | 5 | — | — | 2 | — | — | — | — | — | — | — | — | 2 | 3 | 2 | — | — | 29 | |
| | Գ. | 2 | | 6 | 6 | — | 4 | — | — | 3 | — | — | — | — | 2[2]) | — | — | — | 2 | 2 | 2 | — | — | 29 | |
| Հիմնական. | I. | 2 | — | 6 | 5 | — | 4 | — | — | 3 | — | — | 2[3]) | — | — | — | 2 | — | 2 | 2 | 2 | — | — | 30 | |
| | II. | 2 | — | 5 | 6 | — | 4 | — | — | 3 | — | — | 2 | — | — | — | 2 | — | 2 | 2 | 2 | — | — | 30 | |
| | III. | 2 | — | 5 | 5 | — | 4 | — | — | 2 | — | — | 2 | — | 1 | 2 | — | — | 2 | 2 | 2 | — | — | 29 | |
| | IV. | 2 | — | 5 | 5 | 4 | 2 | 2 | — | 2 | — | — | 2 | — | — | 2 | 2 | — | 1 | — | 2 | — | — | 31 | |
| | V. | — | 2 | 5 | 5 | 3 | — | 3 | 2 | — | 3 | — | — | 1 | — | 2 | 2 | 2 | 1 | — | — | — | — | 31 | |
| | VI. | — | 1 | 6 | 6 | 3 | — | 3 | 3 | — | 3 | 1 | — | — | — | 2 | 2 | 2 | — | — | — | — | — | 32 | |
| Դասերի թ. իւրաք. առ. (բոլոր դասար). | | 14 | 3 | 51 | 44 | 10 | 29 | 8 | 5 | 17 | 6 | 1 | 8 | 1 | 3 | 8 | 10 | 4 | 14 | 13 | 14 | 2 | 2 | 267 | |

*1) Երկրորդ պատրաստականի Հայոց լեզուի մէկ դասը յատկացրած է գլխաւորապէս գեղագրութեան։*

*2) Երրորդ պատրաստականի աշխարհագրութեան դասը՝ հայրենագիտութիւն է։*

*3) Առաջին հիմնական դասարանում աշխարհագրութիւնը սահմանափակւում է Կովկասով։ Իսկ պատմութիւնը՝ քաղաքակրթութեան տարրերով։*

*4) Ամբական երգեցողութեան մասնակցում են I, II և III. IV, V և VI դասարանները՝ երկու խմբերի բաժանուած։*

*5) Ամբական նկարչութեան մասնակցում են III հիմն.՝ դասարանից սկսած՝ շաբաթ. 2 դաս։*

*6) Դպրոցում ընդունուած է նաև ձեռագործական պարերի ուսուցումը առաջին պատրաստականից սկըսած՝ շաբաթական մէկ դաս։*

VIII

# VII.

## ՑԱՆԿԸ

ԱՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ~~1906 Թ. ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԱՑ. ՅԵՏՈՅ~~ ՊԱՇՏՕՆԱՎԱՐԱԾ ԵՆ, ԲԱՑՑ ՆԵՐԿ. ԹՈՂԱԾ ԵՆ Գ. ԴՊՐՈՑԸ.

($19^{12}/_{13}$, $19^{13}/_{14}$ ուս. տ.)

| №№ | Ազգն ու անուն ուսուցիչ-ուսուցչուհու. | Ի՞նչ դպրոց է աւարտած. | Ի՞նչ առարկաներ է դասաւանդած. | Երբ է պաշտօնի հրաւիրուած. | Քանի՞ տարի է պաշտօնավարում. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տիկ. ԱՂԱՄԱԼԵԱՆ Մարիամ. | Գայիանեան Օր. դպր. V հիմ. դասարանը և Թիֆլիսի իգական գիմնազեան. | Հայոց լեզու և կրօն. | $19^{06}/_{07}$ | 3 |
| 2 | Տիկ. ՄԱՆԱՆԴԵԱՆ Վարդուհի. | Գայիանեան Օր. դպր. (երկդասեան դասընթաց) և Թիֆլ. իգ. գիմնազիան (IX դ.). | Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Հայրենագիտութիւն և Բնական պատմութ. | $19^{06}/_{07}$ | 4 |
| 3 | Տիկ. ՊԱՍՏԵՐՄԱՃԵԱՆ Մարիամ. | Թիֆլ. իգ. գիմնազիան և Ժնեւի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը. | Բնական պատմութիւն և Թուաբանութիւն. | $19^{06}/_{07}$ | 2 |
| 4 | Օր. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. | Աստրախանի գիմնազիան և Մոսկուայի բարձր. կուրսերը. | Ռուսաց լ. և գրականութ. Ռուսաց պատմութիւն. | $19^{11}/_{12}$ | 1/2 |
| 5 | Պ. ՇԱՆԹ-ՍԵՂԲՈՍԵԱՆ Լեւոն. | Գէորգեան ճեմարանը և Արտասահմանում (Գերմանիա և Ֆրանսիա) փիլիսոփայական ֆակուլտէտը. | Հայոց լեզու և կրօն. $19^{06}/_{07}$ ուս. տ. Տեռուչ դպրոցի. | $19^{06}/_{07}$ | 2 |
| 6 | Պ. ԵՐԻՑԵԱՆ Գարեգին. | Նկարչական մասնագիտական դպրոց Պետերբուրգում. | Նկարչութիւն. | $19^{06}/_{07}$ | 1 |
| 7 | Պ. ՄԽԻԹԱՐԵԱՆ Արշալոյս. | Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոցը. | Հայոց լեզու. | | 1 |
| 8 | Պ. ՄՈՒԶԱՅԵԱՆ Միքայէլ. | Նովորոսիսկի (Օդեսայի) համալսարանի բնագիտական ֆակուլտէտը. | Ֆիզիքա. | $19^{10}/_{11}$ | 1 |
| 9 | Պ. ԽԱՆԱԶԱՏԵԱՆ Ռուբէն. | Վլադիկավկազի ռէալական դպրոցը և Ժնեւի համալս. | Ֆրանսերէն և ընդհանուր պատմութ. | $19^{08}/_{09}$ | 2 |

# VIII.

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ $19^{11}/_{12}$ ՈՒՍ. Տ.

| № № | Ազգ և անուն ուսուց.-ուսուցչուհու. | Ի՞նչ դպրոց է աւարտած. | Ե՞րբ է պաշտօնի հրաւիրուած. | Ո՞ր դասարաններում դաս ունի. | Ծար. դասերի թիւը. | Ի՞նչ առարկաներից է դասաւանդում. | Տարեկան դասերի թիւը. | Բաց թ. դաս. թիւը. | Աւելի պար. գ. թիւը. | Ռոճիկը դասերի և այլ պարապմ. հմր. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տիկ. ԱԹԱՆԱՍԵԱՆ Վերգինէ Օգսենտեան. | Սիմֆերոպօլի իգ. գիմնազ. 1896 թ. | $19^{07}/_{08}$ | Բ. և Գ. պ. I, II, III և IV դաս. | 23 | Թւաբանութիւն. | 662 | 4 | 13 | 805 |
| 2 | Օր. ԱԽԹԱՆԴԻԼԵԱՆ. Լուսիկ Միքայէլեան. | Թիֆլիսի իգ. գիմն. 1906 թ. և ֆրանսիական ուսանելու ընթացք. է բռնած Դրեզդենում. | $19^{09}/_{10}$ | IV, V և VI հ. դաս. | 10 | Ֆրանսերէն. | 271 | 8 | 21 | 350 |
| 3 | Տիկ. ԶՕՐԵԱՆ Եղիսաբէթ Իսահակ. | Թիֆլ. իգ. գիմնազ. 1895 թ. և Ժնեւի համալսար. բնագիտ. բաժինը. | $19^{10}/_{11}$ | Գ. պ. II, III, IV և VI դաս. | 17 | Աշխարհագր. բնակ. պատ. և առողջապ. ալգէբրա. | 407 | 67 | 8 | 595 |
| 4 | Տիկ. ՁՈՀՐԱԲԵԱՆ Սրբուհի Յովհաննիսեան. | Ռոստովի իգ. գիմն. 1891 թ. և Պետերբ. կանանց բարձրագ. կուրսերը 1898 թ. | $19^{06}/_{07}$ | I, II, III, IV և V հիմն. դաս. | 24 | Ռուսաց լեզ., և Ռուսաստ. աշխար. Ռուսաց պատմ. | 635 | 24 | 30 | 840 |
| 5 | Տիկ. ՈՍԿԱՆԵԱՆ Վարվարէ Ներսիս. | Մարիամեան Յովն. դպր. 1883 թ. և մկալական Թիֆլ. արհեստ. վարժ. | $19^{06}/_{07}$ | Ա. Բ. և Գ. պ. և I, II, III և V դ. | 14 | Ձեռագործ. | 388 | 2 | — | 490 |
| 6 | Օր. ՄԵԼԻՔԵԱՆ Նատալիա Մաքսու. | Թիֆլիսի Ս. Նունէի օրիորդաց դպր. 1894 թ. | $19^{10}/_{11}$ | — | — | Վերակացուհ. և ընթերցանութ. դաս. | — | — | 71 | 360 |
| 7 | Օր. ՔԱՓԱՆԱԿԵԱՆ Լուսիկ Գրիգորեան. | Թիֆլիսի իգ. գիմն. VII դաս. 1899 թ. և մանկական դպր. վարժուհու ցէնզ. 1907 թ. | $19^{09}/_{10}$ | Գ. պ. դաս. | 6 | Ռուսաց լեզ., և դաստիար. պաշտօն. | 163 | 10 | 48 | 210<br>360 |
| 8 | Օր. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ Վարդուհի Մարտիրոսեան. | Թիֆլ. ա. գիմնազ. 1905 թ. | $19^{09}/_{10}$ | Ա. և Բ. պատ. | 12 | Թւաբանութ., և Ռուսաց լեզ., նաև դաստ. պաշտ. | 342 | — | 68 | 420<br>360 |
| 9 | Օր. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. | Աստրախանի գիմն. և Մոսկուայի բարձրագոյն կուրսերը 1911 թ. | $19^{11}/_{12}$ | V և VI դաս. | 13 | Ռուսաց լեզ., և գրական., Ռուս. պատ. | 151 | 56 | 2 | 253 |

| № | Ազգ. և անուն ուսուց.-ուսուցչուհու. | Ի՞նչ դպրոց է աւարտած. | Ե՞րբ է մտել վարժարան ծառայութ. | Ո՞ր դասարաններում դաս է տալիս. | Շաբաթական դասերի թիւ. | Ի՞նչ առարկաներից է դասաւանդում. | Տարեկան ռոճիկը դասերի | Յաւելեալ դասերի | Աւելորդ դասերի | Ընդհանուր տարեկան ռոճիկը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | ԱԲՈՎԵԱՆ Սարգիս Եսայեան. | Ներս. դպր. 1888 թ. Գէորգ. ճեմ. Ա. լսար. Թիֆլ. Երկրաչափ. դպր. 1892 թ. և Լայպց. Գիւղատ. Ինստիտ. 1896 թ. | 19⁰⁶/₀₇ | I, IV, V և VI հ. դաս. | 18 | Բնագիտութ. Աշխարհ. Ալգեբրա և Երկրաչափ. Տեխ. գծագրել. | 467 | 41 | 43 | 630 570 |
| 11 | ԱՐՂՈՒԹԵԱՆ Սիմէօն Ներսիսեան. | Ներսիսեան դպր. 1902 թ. Թիֆլ. Գեղարուեստական դպր. 1904 թ. | 19⁰⁷/₀₈ | Ա. Բ. Գ. պ. և I, II, III և IV դ. | 15 | Նկարչութ. | 389 | 13 | 3 | 525 |
| 12 | ՋՈՒՐԱԲԵԱՆ Սարգիս Սահակեան. | Ներսիսեան դպր. 1895 թ. | 19⁰⁷/₀₈ | Գ. պ. I, II և III դ. | 23 | Հայոց լեզու և պատմութ. | 656 | — | 12 | 805 |
| 13 | ԹՈՐՈՍԵԱՆ Սահակ. | Գէորգեան ճեմարան 1907 թ. | 19⁰⁹/₁₀ | III, IV, V և VI դաս. | 24 | Հայոց լ. և Գրակ., Հայ. և Ընդհ. պատ. Հայաս. աշխ. | 552 | 64 | — | 840 |
| 14 | ԹՈՒՄԱՆԵԱՆ Աշոտ Յովհաննիսեան. | Ներսիսեան դպր. 1901 թ. | 19¹⁰/₁₁ | Ա. Բ և Գ. պատր. | 19 | Հայոց լ. Իրազնութ. և Հայրենագ. | 510 | 13 | 5 | 665 |
| 15 | ՄԱՆՈՒԿԵԱՆ Ազատ. | Պետերբուրգի Երաժշտ. կուրսերը Ամբակումովի 1904 թ. | 19⁰⁶/₀₇ | Բոլոր դաս. | 16 | Երաժշտութ. | 444 | 2 | 11 | 560 |
| 16 | ՄԵԼՈՅԵԱՆ Գարեգին. | Գէորգեան ճեմարանը 1907 թ. | 19¹¹/₁₂ | III և IV դաս. | 10 | Հայոց լեզու. | 329 | — | 42 | 350 |
| 17 | ՄԵԼԻՔ-ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ. | Պետերբ. Նիկոլ. ճարտար. դպրոցը ա. կարգի 1887 թ. (Ник. Инжен. уч.) | 19¹¹/₁₂ | V և VI դաս. | 13 | Ռուսաց լ. և Գրականութ., Ռուս. պատ. | 132 | — | — | 202 |
| 18 | ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Մելիտոն. | Ներսիսեան դպր. և Գէորգ. ճեմ. 1900 թ. | 19¹⁰/₁₁ | Բոլոր դաս. | 17 | Կրօն և Եկեղեցական պատմութ. | 443 | 49 | 2 | 595 |
| 19 | ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ (Տէրեան) Կարապետ. | Գէորգ. ճեմ. 1883 թ. և Փարիզ. Սորբոնում և „Ecole des ponts et chaussées"-մաթեմատիկա. | 19¹¹/₁₂ | V և VI դաս. | 6 | Ֆիզիկա. | 156 | 4 | — | 210 |
| | | | | | | Տարւայ ընթացքում . . . | 7097 | 357 | 379 | |

## IX.

### 1911—1912 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ.

**ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԵՆ ԵՂԵԼ ՀԵՏԵՒ. ԴԱՍԱԳՐՔԵՐԸ**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ.**

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. I ս.** (Առաջ. պատր. դաս.) | **«ԼՈՒՍԱԲԵՐ»** *Ա. Տարի.* | *Ս. ԼԻՍԻՑԵԱՆ, Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Լ. ՇԱՆԹ.* | *Թիֆլիս.* III *տպագրութ.* *1910 թ.* |
| **Ուսմ. II ս.** (Երկր. պատր. դաս.) | **«ԼՈՒՍԱԲԵՐ»** *Բ. Տարի.* | *ՆՈՅՆ.* | » » |
| **Ուսմ. III ս.** (Երրորդ պատր. դաս.) | **«ԼՈՒՍԱԲԵՐ»** *Գ. Տարի.* | *ՆՈՅՆ.* | » » |
| **Ուսմ. IV ս.** (Առաջ. հիմն. դաս.) | **«ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ»** *Գ. Տարի.* | *Ղ. ԱՂԱՅԵԱՆ.* | *Թիֆլիս.* |
| **Ուսմ. V ս:** (Երկր. հիմն. դաս.) | **«ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ»** *Դ. Տարի.* | *ՆՈՅՆ.* | » » |
| **Ուսմ. VI ս.** (Երրորդ հիմն. դաս.) | **«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ»** *Ա. և Բ. Մաս.* | *ԷՄԱՆՈՒԷԼ քահանայ ՆԱԶԱՐԵԱՆ.* | *Ալէքսանդրօպ.* V *հրատարակ.* *1907 թ.* |
| **Ուսմ. VII ս.** (Չորրորդ հիմն. դաս.) | **«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ»** *և* **«ԳԻՐ ՈՒ ԿԵԱՆՔ»** | *ՆՈՅՆ.* *Յ. ՄԱԼԽԱՍԵԱՆ և ՆԱՐ-ԴՈՍ.* | *Ալէքս. 1907 թ.* V *տպագրութ.* *Թիֆլիս 1911 թիւ.* |
| **Ուսմ. VIII ս.** (Հինգեր. հիմն. դաս.) | **«ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ»** *Ա. և Բ. Մաս.* | *Ղ. ԱՂԱՅԵԱՆ, Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Վ. ՓԱՓԱԶԵԱՆ.* | *Թիֆլիս 1910 թիւ.* |
| **Ուսմ. IX ս.** (Վեցեր. հիմն. դաս.) | **«ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ»** *Ա. և Բ. Մաս.* **«ՊԱՏՄ. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹ.»** | *ՆՈՅՆ.* *Վ. ՓԱՓԱԶԵԱՆ.* | » » *Թիֆլիս 1911 թիւ.* |

## ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. II տ.** (Երկր. պատրաստակ.) | „РУССКАЯ ГРАМОТА“ Часть I азбука. | Е. Е. Соловьевой и Е. И. и Л. И. Тихѣевыхъ. | С. П. Б. 1908. Изданіе II. |
| **Ուսմ. III տ.** (Երրորդ պատրաս.) | „НОВЬ“ Часть I. | Н. В. Тулупова и П. М. Шестакова. | Москва. 1911. Изданіе IV. |
| **Ուսմ. IV տ.** (Առաջ. հիմն. դաս.) | „НАЧАЛЬНАЯ ХРЕСТОМАТІЯ“ Часть I. | П. Корханиди. | Тифлисъ. 1910. Изданіе VII. |
| **Ուսմ. V տ.** (Երկր. հիմն. դաս.) | „ЖИВОЕ СЛОВО“ Часть I. | А. Я. Острогорскаго. | С. П. Б. 1909. Изданіе IV. |
| **Ուսմ. VI տ.** (Երրորդ հիմն. դաս.) | „РУССКІЕ ПИСАТЕЛИ“ Часть I. | В. Мартыновскаго. | С. П. Б. 1910. Изданіе 23-ье. |
| **Ուսմ. VII տ.** (Չորրորդ հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. | „ „ | „ „ |
| **Ուսմ. VIII տ.** (Հինգ. հիմն. դաս.) | „РУССКІЕ ПИСАТЕЛИ“ Часть II. | „ „ | „ „ |
| **Ուսմ. IX տ.** (Վեցեր. հիմն. դաս.) | „ИСТОРІЯ РУССКОЙ ЛИТЕРАТУРЫ“ | Дворникова. | |

## ՖՐԱՆՍԵՐԷՆ.

| | | | |
|---|---|---|---|
| **Ուսմ. VII տ.** (Չորրորդ հիմն. դաս.) | „LE PETIT FRANCAIS“ | Octave Klasse. | Вильна. 1908. Изданіе VII. |
| **Ուսմ. VIII տ.** (Հինգ. հիմն. դաս.) | „LES CONTESDE FÉES“ | Perrault. | |
| **Ուսմ. IX տ.** (Վեցեր. հիմն. դաս.) | „NARRATIONS“ | H. Demmenie e Levrier. | |

## ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. I ս.** (Առաջ. պատր. դաս.) | Աշակերտուհիները չեն ստացած դասագիրք. ուսուցիչը օգտւում է գլխաւորապէս «Թուաբանական օրինակների և խնդիրների սիստեմատիկ ժողովածու»-ից: Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ. | | Վաղարշապատ. 1909. |
| **Ուսմ. II ս.** (Երկր. պատր. դաս.) | **«ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ»** Պրակ Ա. | Մոսկուայի քաղաք. դպրոցն. ուսուցիչների կազմ. դասագիրք. փոխ. Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ. | Թիֆլիս. 1907. |
| **Ուսմ. III ս.** (Երրորդ պատր. դաս.) | ՆՈՅՆԸ. Պրակ Բ. | » » | » » |
| **Ուսմ. IV ս.** (Առաջ. հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. Պրակ Գ. | » » | » » |
| **Ուսմ. V ս.** (Երկր. հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. Պրակ Դ. | Շապշնիկովի և Վալցովի. փոխադրութ. Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆԻ. | » » |
| **Ուսմ. VI ս.** (Երրորդ հիմն. դաս.) **Ուսմ. VII ս.** (Չորրորդ հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. Պրակ Ե. | ՆՈՅՆԸ. | » » |
| | **ԱԼԳԵԲՐԱ** *(Հանրահաշիւ).* | | |
| Չորրորդ, հինգերորդ եւ վեցեր. հիմն. դաս. (**Ուսմ. VII, VIII եւ IX ս.**) | **„СБОРНИКЪ АЛГЕБРАИЧЕСКИХЪ ЗАДАЧЪ“** Часть I и II. | **Н. А. Шапошниковъ и Н. К. Вальцовъ.** | Москва. 1909. |
| | **ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ** *(Գէօմէտրիա).* | | |
| Հինգերորդ եւ վեցերորդ հիմն. դաս. (**Ուսմ. VIII եւ IX ս.**) | **„ЭЛЕМЕНТАРНАЯ ГЕОМЕТРІЯ“** (Для средн. учебн. зав.) | **А. Киселевъ и Давидовъ.** | Москва. 1909. |

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւ |
|---|---|---|---|
| **Ուս. III ս.** (Երրորդ պատր. դաս.) | *Հայրենագիտութիւնը անցնում են առանց դասագրքի.* | | |
| **Ուս. IV ս.** (Առաջ. հիմն. դաս.) | *Դասագիրք չունեն.* **„НАЧАЛЬНЫЙ КУРСЪ ГЕОГРАФІЙ“.** *Օգտւում են այս գրքով.* | | Москва. 1907. |
| **Ուս. V ս.** (Երկրորդ հիմն. դաս.) | *Դասագիրք չունեն.* | | |
| **Ուս. VI ս.** (Երրորդ հիմն. դաս.) | **«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ»**. *(Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա). Բ. մաս.* | *Փոխ. Ա. ԱԲԵՂՅԱՆԻ (Ըստ. Իւանովի և Կրուբերի և ուր.).* | *Թիֆլիս.* 1909. |
| **Ուս. VII ս.** (Չորրորդ հիմն. դաս.) | *ՆՈՅՆԸ Եւրոպա (Գ. Մաս.)* | *ՆՈՅՆԸ.* | *Թիֆլիս.* 1910. |

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.
(Географія Россійской Импери).

| | | | |
|---|---|---|---|
| **Ուս. VIII ս.** (Հինգեր. հիմն. դաս.) | **„ГЕОГРАФІЯ РОССІЙСКОЙ ИМПЕРІИ“.** | А. Барановъ и И. Горѣловъ. | Москва. 1909. 24-ое изданіе. |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

| | | | |
|---|---|---|---|
| **Ուս. VI ս.** (Երրորդ հիմն. դաս.) | *Դասագիրք չունեն.* | | |

## ՖԻԶԻՔԱ.

| | | | |
|---|---|---|---|
| **Ուս. VIII և IX ս.** (Հինգեր. եւ վեցեր. հիմն. դաս.). | **„КРАТКІЙ УЧЕБНИКЪ ФИЗИКИ“** | Краевича. | |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. VI տ.** (Երրորդ հիմն. դաս.) | «ՀԻՆ ԱՐԵՒԵԼՔՆ ՈՒ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՅՈՒՆԱՍՏԱՆ» | Դոբբինի. Թարգմ. Ի. ՀԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ և Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆԻ. | Թիֆլիս. 1908. |
| **Ուսմ. VII տ.** (Չորրորդ հիմն. դաս.) | «ՁԵՌՆԱՐԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» Ա. Մաս. (Հին դար). | Գ. Վինոգրադովի. Թարգմ. ԽԱԺԱԿԻ. | |
| **Ուսմ. VIII տ.** (Հինգեր. էիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. Միջին դար. Բ. Մաս. | ՆՈՅՆԸ. | |
| **Ուսմ. IX տ.** (Վեցերորդ հիմն. դ.) | ՆՈՅՆԸ. Նոր դար. Գ. Մաս. | ՆՈՅՆԸ. | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

| | | | |
|---|---|---|---|
| **Ուսմ. IV տ.** (Առաջին հիմն. դ.) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» | Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ և Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ. | Թիֆլիս. 1909. |
| **Ուսմ. V տ.** (Երկրորդ հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. | ՆՈՅՆԸ. | » » |
| **Ուսմ. VII տ.** (Չորրորդ հիմն. դաս.) | Դասագիրք չունին. | | |
| **Ուսմ. VIII տ.** (Հինգեր. հիմն. դաս.) | «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» | Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ. | Թիֆլիս. 1903. |
| **Ուսմ. IX տ.** (Վեցեր. հիմն. դաս.) | ՆՈՅՆԸ. | ՆՈՅՆԸ. | « « |

[504-]



## ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. VIII տարի.**<br>(Հինգեր. հիմն. դաս.) | „УЧЕБНИКЪ РУССКОЙ ИСТОРІИ“ | Острогорскаго. | С. П. Б.<br>1908.<br>изданіе 18-ое. |
| **Ուսմ. IX տարի.**<br>(Վեցեր. հիմն. դաս.) | „УЧЕБНИКЪ РУССКОЙ ИСТОРІИ“ | Иванова. | |

## ԿՐՕՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

| Դասարան. | Գրքի անունը. | Հեղինակութիւն. | Տպագրութեան տեղն ու թիւը. |
|---|---|---|---|
| **Ուսմ. I տարի.**<br>(Առաջ. պատր. դաս.) | «ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ»<br>*Ա. տարի.* | *Ս. Քհն. ՍԱՀԱԿԵԱՆԻ.* | *Թիֆլիս 1910.* |
| **Ուսմ. II տարի.**<br>(Երկր. պատր. դաս.)<br>**Ուսմ. III տարի.**<br>(Երրորդ. պատր. դաս.)<br>**Ուսմ. IV տարի.**<br>(Առաջ. հիմն. դաս.) | «ՀԻՆ ՈՒԽՏ» | *ՆՈՅՆԸ.* | « « |
| **Ուսմ. V տարի.**<br>(Երկր. հիմն. դաս.) | «ՆՈՐ ՈՒԽՏԸ». | *ՆՈՅՆԸ.* | « « |
| **Ուսմ. VI տարի.**<br>(Երրորդ հիմն. դաս.)<br>**Ուսմ. VII տարի.**<br>(Չորրորդ հիմն. դաս.) | «ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ». | *ՆՈՅՆԸ.* | « « |
| **Ուսմ. VIII և IX տ.**<br>(Հինգեր. եւ վեցեր. հիմն. դաս.) | «ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ». | *Ա. ՋԱՄԻՆԵԱՆ.* | *Նոր Նախիջևան 1809.* |

*Ինչ վերաբերում է բնագիտութեան, երաժշտութեան և առողջապահութեան՝ աշակերտուհիները չունեն դասագիրք և ոչ մի դասարանում:*

*Ի դիմաց Մանկավարժական Խորհրդի տեսուչ՝* **Ս. ԱՐՈՎԵԱՆ.**

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

A II/67246